

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Դեռ ուրարտական ժամանակներից մեր ժողովրդի համար գիրը եղել է, առանց չափազանցման, պետական անկախության և ազգային ինքնության խորհրդանիշ:

Ք. ա. IX դ. երկրորդ կեսին Ուրարտուի թագավոր Սարդուրի I-ը (835-824 թթ.) իր արձանագրություններում գործածում էր ասորեստանյան վանկային սեպագիր նշաններ, որոնցից յուրաքանչյուրը մի քանի իմաստ ուներ, հաճախ էլ՝ 10-ից ավելի: Բայց ընդամենը մի քանի տարի անց՝ նրա որդի և հաջորդ Բշպուինի թագավորի օրոք (823-810 թթ.), ուրարտացիք արդեն մշակել էին սեփական սեպագրերի ավելի պարզեցված, առավելապես մեկ որոշակի իմաստ արտահայտող վանկային համակարգ, որը զերծ էր ասուրական բազմիմաստ սեպանշաններից¹: Ուրարտական սեպագրերը գործածությունից դուրս եկան Ք. ա. VI դարում՝ Ուրարտու պետության (Վանի թագավորության) անկումից հետո: Ըստ այսմ, ուրարտական սեպագրության 300-ամյա շրջանը խորհրդանշորեն կապվում է Ուրարտու պետության հզորության և անկման դարաշրջանի հետ:

Արտաշիսյան հարստության շրջանում (Ք. ա. 190 թ. սկսած) Հայաստանն այնպիսի բարգավաճման հասավ, որ, օտարազգի ուսումնասիրողների պնդմամբ, տնտեսության և մշակույթի նման ծաղկումն անհնար է պատկերացնել առանց սեփական գրի ու գրականության²: Նման հարցադրումն արդեն իսկ պարունակում է նախամաշտոցյան հայերեն գրի գաղափարը:

Նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցած հայ գրի և գրականության մասին վկայություններ են պահպանվել անտիկ օտար հեղինակների երկերում: III դ. ժամանակագիր և եկեղեցական մեկնիչ Հիպոդիտոսը³ հունարեն բնագրով իր «Ժամանակագրության» մեջ՝ գրված Ալեքսանդր Սևերոս կայսեր 13-րդ տարում (235 թ.)՝ Հաբեթի ցեղի 47 ազգերից որպես գրագետ (գիր ունեցող) հիշատակում է հետևյալ վեցին՝ իբերներ, լատիններ (որոնց գրից օգտ-

¹ Ské G. A. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи.— Вестник древней истории, 1953, № 1, с. 248.

² Ské B. A. И с т р и н. Возникновение и развитие письма. М., 1965, с. 355.

³ Հիպոդիտոսը III դ. սկզբին Հռոմում եղել է պրեքստեր (երեց) և եպիսկոպոս, 235 թ.՝ արտրվել Մարդինիա: Գլխավոր աշխատություններն են՝ «Ժամանակագրություն» և «Քննություն բոլոր հերձվածների մասին» (հունարեն բնագրով)՝ բաղկացած 10 գրքից:

վում են և հռովմայեցիք, իսպանացիք, հույներ, մարեր, հայեր⁴: Հիպոդիտոսի այս վկայությունն իրենց երկերում թարգմանաբար մեջբերում են Փիլոն Տիրակացին⁵, Անանիա Շիրակացին⁶, Մովսես Կաղանկատվացին: Խիստ տարակուսելի է, որ Հիպոդիտոսի հունարեն բնագրում առաջին տեղում, այն էլ լատիններից և հույներից առաջ, հիշված են իբերները, որոնք բնակվում էին Պիրենեյան թերակղզու հյուսիս-արևմուտքում և հարևան էին իսպանացիներին: Հավանորեն այս նկատի առնելով, Փիլոն Տիրակացու որոշ ձեռագրերում գրիչները «իբերացիք» ուղղել են «երրայեցիք», որից և օգտվել է Մովսես Կաղանկատվացին «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում՝ իր կողմից վերջում ավելացնելով նաև աղվաններին, նկատի առնելով Մաշտոցի ստեղծած աղվանական գիրը. «Եւ ի սոցանէ, որ գիտեն դպրութիւն՝ Երրայեցիք, Լատինացիք, որով Հոռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղուանք»⁷: Այստեղ հարկ չենք համարում հանգամանորեն անդրադառնալ հույն պատմագիր Փիլոստրատոսի (175–249 թթ.) հիշատակած հովազի ոսկե մանյակին, որի վրա հայերեն տառերով գրված էր՝ «Թագավոր Արշակ Նյուսիոս աստծուն» ընծայականը: Այս վկայությունը բերում են մի շարք հեղինակներ՝ սկսած Ղ. Բնճիճյանից⁸:

Հայ հին մատենագրության մեջ հիշատակվում է երկու քրմական մեհյան-դպրատուն՝ երկուսն էլ կապված նախամաշտոցյան դպրության և գրչության հետ: Առաջինը գտնվում էր Հայաստանի արևելյան մասում՝ Վաղարշապատից դեպի Արտաշատ տանող ճանապարհին, և կոչվում էր Տիր դպրության աստծո անունով՝ «գիտութեան քրմաց և ուսման ճարտարութեան մեհեան»⁹, երկրորդը՝ Հայաստանի արևմտյան մասում՝ Դարանաղյաց գավառի Հանի ամրոցում, որտեղ պահվում էին պատմական մատյաններ: Ինչ գրեր էին գործածում այդ մեհյաններում: Խորենացու վկայությամբ, Բարդաճանը, որ Եդեսիայից էր,

⁴ Hippolytus Werke, Bd. IV – Die Chronik. Durchgesehen und herausgegeben von R. Helm nebst einem Beitrag von J. Markwart (=GCS 36), Leipzig, 1929, S. 56- 58 – (Liste der Iaphetvölker (47) und der schriftkundigen unter ihnen (6)).

⁵ Ժամանակագրութիւն. Խաւսք Փիլոնի. տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Ե, Անթիլիաս. 2005, էջ 906-907. «Եւ այս ազգք են, որ գիտեն ի սոցանէ դպրութիւն. Բերացիք, Ղատինացիք՝ որով Հոռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք»:

⁶ Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ համարողի. տե՛ս՝ Ա. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը (ուսումնասիրություն), Երևան, 1944, էջ 360. «Եւ այս ազգք են՝ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն. Բերացիք, Ղատինացիք՝ որով Հոռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք»:

⁷ Մովսէս Կաղանկատվացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, Ա. Գ, էջ 6: Շ. Սմբատյանի ռուսերեն թարգմանությունը թյուրիմացության տեղիք է տալիս՝ «Имеющие письменность народы суть: евреи, латиняне, [письменностью] которых пользуются и ромеи, испанцы, греки, мидийцы, армяне, алуанцы» (Мовсэс Каланкатуаци. История страны Алуанк. Ереван, 1984, с. 24): Ըստ այս թարգմանության՝ լատինների գրով օգտվում էին բոլոր հաջորդ թվարկված ազգերը, մինչդեռ Հիպոդիտոսը և Կաղանկատվացին նշում են, որ լատինների գիրը գործածում էին միայն հոռոմները, և այնուհետև թվարկում են գիր ունեցող մյուս ազգերին:

⁸ Ղ. Բնճիճյան. Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 76:

⁹ Ազգաթանգեղեայ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ազգթ.), աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1909, « 778:

մտավ Անի կամ Հանի ամրոցը, կարդաց Ողյուսյ քրմի մեհենական պատմությունը, որի մեջ թագավորների գործերի հետ հիշատակված էր Տիգրան վերջին հայոց թագավորի ձեռքով նրա եղբայր Մաժան քրմապետի գերեզմանին կառուցված բազիլը Բագրևանդի Բագավանում¹⁰: Ո՞ր լեզվով է գրված եղել այդ մատյանը. եթե Բարդաճանը, ինչպես վկայում է Խորենացին, այդ պատմությունը փոխադրել է ասորերենի և ապա հունարենի, նշանակում է՝ մեհենական պատմության բնագիրը պետք է եղած լիներ հայերեն և գրված հայերեն գրերով: Ուսումնասիրողներից ոմանք, ինչպես Ա. Աբրահամյանը¹¹, ենթադրում են, թե մատյանը գրված է եղել արամեական գրով, բայց ասորիներն իրենք իսկ արամեական գիր էին գործածում հատկապես Եդեսիայի շրջանում: Նույնը վերաբերում է և Տիր աստծո մեհյանին:

Յ. Մարկվարտը ժխտում է հայ մատենագրության գոյությունը մինչև V դարը՝ հետևյալ փաստարկով. «Այս երկրի լեզվով դեռ չէր գրվել ոչ մի տող, որովհետև այն ժամանակվա հայտնի այբուբեններից և ոչ մեկը ի վիճակի չէր արտահայտելու հայերենի բազմաթիվ ու դժվարին հնչյունները»¹²: Գերմանացի հայագետի այս ուշագրավ միտքը մեզ բերում է հակադարձ տրամաբանության. եթե նախամաշտոցյան շրջանում եղել է հայ մատենագրություն, ապա դա կարող էր լինել միայն հայատառ այբուբենով և ոչ թե արամեատառ կամ հունատառ: Ինչպես կտեսնենք ստորև, 22 կամ 24 նշանագիր ունեցող դանիելյան այբուբենի խափանումը, անկախ տառերի տեսակից, վճռաբար հերքում է հայոց լեզվի համար երբևէ արամեական կամ որևէ սեմական գիր գործածելու ենթադրությունը¹³, որովհետև վերջիններս նույնպես բաղկացած էին 22 տառից: Խնդիրը տառերի տեսակը չէ, այլ այն, որ տառերի նվազ քանակով անհնար էր արտահայտել հայոց լեզվի հնչյունային ճոխ համակարգը: Այն կարծիքը, իբր նախամաշտոցյան շրջանում հայոց լեզուն ավելի նվազ թվով հնչյուններ է ունեցել, հիմնավորապես հերքում է մեծն Հրաչյա Աճառյանը՝ հենվելով Հ. Հյուբշմանի մշակած հայոց լեզվի հնչյունների ծագման ժամանակագրության վրա¹⁴:

XIII դ. հայ պատմիչ Վարդան Արևելցին վկայում է Լևոն արքայի օրոք Կիլիկիայում հայտնաբերված դրամի մասին, որի վրա հայերեն լեզվով դրոշմված են եղել հեթանոս հայ թագավորների անուններ, ինչով և պատմիչը հաստատում է Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն գրերի գոյությունը¹⁵:

¹⁰ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խոր.), աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, Բ. ԿԶ, էջ 201:

¹¹ Ա. Աբրահամյան. Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982, էջ 79:

¹² Յ. Մարկվարտ. Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը.՝ Մեսրոպ Մաշտոց. հոդվածների ժողովածու (այսուհետև՝ Մեսրոպ Մաշտոց), Երևան, 1962, էջ 124:

¹³ F r. M ü l l e r.՝ Zur Geschichte der armenischen Schrift.՝ Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes (WZKM), 1888, S. 245-248 (թարգմ.՝ «Հանդես ամսօրյա», 1889, էջ 86-87); WZKM, 1890, S. 284-288 (թարգմ.՝ «Հանդես ամսօրյա», 1891, էջ 68-70): Տե՛ս նաև ն ու յ ն ի՝ Über den Ursprung der Vocalzeichen der armenischen Schrift.՝ WZKM, 1894, S. 155-160 (թարգմ.՝ «Հանդես ամսօրյա», 1894, էջ 244-246):

¹⁴ Հ. Աճառյան. Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 452-453:

¹⁵ Վարդան Բարձրբերդցի. Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 70:

Մ. թ. 387 թ. Հայաստանը բաժանվեց հարևան երկու հզոր տերությունների միջև: Հայոց պետականությանը սպառնացող ահավոր վտանգի հետ հայ ժողովրդի գլխին կախվել էր հոգևոր և մշակութային երկուստեք էքսպանսիայի և ուժացման ոչ պակաս սոսկալի վտանգ: Երկրի և ժողովրդի համար այդ ճակատագրական պահին օգնության եկավ հազարամյա պատմական հիշողությունը՝ ինքնուրույն գրի գաղափարը՝ որպես հզոր պետականության խորհրդանիշ: Սովսես Խորենացին շատ դիպուկ է բնորոշել այդ բախտորոշ պահը, երբ Մեսրոպ Մաշտոցն սկսեց իր գործունեությունը. «Տեսեալ թե ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, և զխոտվութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ»¹⁶ («Տեսնելով, որ հայոց թագավորության վերջը հասել է, Մեսրոպը (երկրի) խոտվություններն իր համբերության նյութը դարձրեց»¹⁷):

Մանկության տարիներին ստանալով հելլենական կրթություն, Մաշտոցն այնուհետև ծառայության է անցնում Արշակունյաց արքունիքում՝ ունի Առավանի հազարապետության¹⁸ ժամանակ, երբ գրագրությունը վարում էին պարսկերեն և ասորերեն: Ամենօրյա շփումը օտարալեզու թղթերի ու հրովարտակների հետ չէր կարող չարթնացնել նրա մեջ հայոց գիր ևս ունենալու նախանձախնդրություն: Արքունի ծառայության հետ գրագիր Մեսրոպը հետզհետե խորամուխ եղավ աստվածային գրքերի ընթերցանության մեջ¹⁹, որոնք հունարեն էին կամ ասորերեն: Ղազար Փարպեցու հաղորդմամբ, այդ ժամանակ Հայաստանի վանքերում ու եկեղեցիներում պաշտամունքը և Սուրբ Գրքի ընթերցումը կատարվում էին ասորերեն լեզվով, որից ոչինչ չէր հասկանում և օգտվում, պատմիչի խոսքով, այսպիսի մեծ աշխարհի ժողովուրդը: Եվ երանելի այր Մաշտոցը երկար ժամանակ այս մասին մտածելով, փղձկում էր ինքն իր մեջ՝ «մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»²⁰:

Արքունի դռնից հեռանալուց հետո Մաշտոցը շուտով մտնում է միայնակեցության կարգը և անձնատուր լինում ճգնությամբ²¹: Այժմ արդեն միայնակեցությունը շատ ժամանակ էր տալիս խորհելու, կենտրոնանալու նշանագրերի հարցի վրա: Նա կանգնած էր երկրնտրանքի առջև՝ ստեղծել նոր նշանագրեր, թե՛ գտնել հայոց հին գիրը: Գտնել հին նշանագրերը նշանակում էր վերա-

¹⁶ Խոր., Գ. ԽԷ, էջ 316:

¹⁷ Մ ո վ ս է ս Խ ո բ է ն ա ց ի Պատմություն Հայոց (այսուհետև՝ Խոր. (Մալխ.), թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, Գ. ԽԷ, էջ 284:

¹⁸ Կ ո բ յ ու ն Վարք Մաշտոցի (այսուհետև՝ Կոր.), բնագիրը՝ ձեռագրական այլընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, [Գ], էջ 36: Առավան հազարապետի մասին տե՛ս Ա. Մ ո լ շ է դ յ ա ն Ո՞վ է Առավան հազարապետը. - ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 7, էջ 67-75:

¹⁹ Կոր., [Գ], էջ 36:

²⁰ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փարպ.), Տիղիս, 1904, Ա. Ժ, էջ 13-14:

²¹ Կոր., [Դ], էջ 38:

կանգնել կապը հայոց հնամյա մշակույթի հետ, հաղորդակցվել անցյալի գրավոր պատմությանն ու ժառանգությանը, ինչպես անում էին հույներն ու հռոմեացիք, ասորիներն ու պարսիկները: Եվ Մեսրոպն ընտրեց նախապես կորսվածը վերագտնելու ուղին:

Իսկ որտե՞ղ կարելի էր գտնել հայոց հին գրերը, եթե ոչ Հայաստանի այն վայրերում, որտեղ դեռ կենդանի էր հեթանոսական արմատը: Եվ Մեսրոպն իր հավատացյալ աշակերտների հետ գնաց իջավ Գողթնի անկարգ ու անխնամ տեղերը²², «որտեղ բուն դրած հեթանոսական աղանդը Տրդատի օրերից մինչև այդ ժամանակ երևան եկավ»²³:

Ինչո՞վ բացատրել, որ հենց նոր-նոր կրոնավոր դարձած Մաշտոցը, որը խիստ ճգնակեցության էր նվիրել իրեն և նույնիսկ հավատացյալներին քարոզելու քիչ փորձ ուներ, միանգամից որոշեց ձեռնարկել մի այնպիսի դժվարին գործ, ինչպես հեռավոր խուլ անկյունում հնուց ի վեր ծվարած հեթանոս քրմերին քրիստոնեական դարձի բերելը: Պետք է վերջապես վերանայել հարցի ավանդական մեկնաբանումը, իբր, Մաշտոցը Գողթն էր եկել քրմերին հալածելու և բնակիչներին «սասանայական դիվապաշտ սպասավորությունից բերելու Քրիստոսի հնազանդության»²⁴: Հայ եկեղեցին այդ նպատակի համար շատ ավելի փորձառու և հերձվածողների դեմ պայքարի բովով անցած քարոզիչներ ուներ, անշուշտ: Հարցի պատասխանը պետք է ավելի խորքերում որոնել, քան ներկայացնում է Մաշտոցի զգուշավոր կենսագիրը, որը, հետևելով իրեն առաջադրված սրբախոսական երկի պահանջներին, առայժմ ծածկամտորեն լռում է իր ուսուցչի Գողթն գալու բուն նպատակի մասին:

Գինեվեոս Գողթն գավառը հայտնի էր դյուցազուն քաջերի և խոլ քաջքերի մասին գուսանական երգերով ու վեպերով: Հինավուրց ավանդությունները և վիպասանությունները կառչած էին պահում բնության ու մարդկային շնորհներով լեցուն այդ գողտրիկ գավառը հեթանոս ոգուն և հեթանոս անցյալին:

Չպետք է անտեսել, որ քրմերը հեթանոս հայ բնակչության ամենից գրագետ և կրթված խավն էին ներկայացնում: Նրանք ժամանակին դիմադրել էին Մասանյան առաջին արքայից արքաների օրոք Հայաստանում բռնի տարածվող զրադաշտական կրոնին և պահպանել էին հայոց գիրն ու դպրությունը, պատմական և վիպական գրույցները, որոնց հատակտորները գրի է առել Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ՝ Գողթան երգիչներից: Ժամանակին Գրիգոր Լուսավորիչը չէր վարանում օգտվել նշանավոր քրմական տների հեղինակությունից և նրանց որդիներին անձամբ իր ձեռքի տակ սնելով՝ կրթում էր նոր հավատով: Այդ մասին են վկայում ինչպես Ագաթանգեղոսի Պատմությունը²⁵, այնպես էլ Մահակ Պարթևի «Գիր աւանդութեան» գրվածքը²⁶: Մեծ Հայքի գավառների առաջին տասներկու եպիսկոպոսները հենց այդ քրմերի որդիներից

²² Կոր., [Ե], էջ 40-41:

²³ Խոր. (Մալխ.), Գ. ԾԳ, էջ 293:

²⁴ Կոր., [Ե], էջ 41:

²⁵ Ագաթ., § 845:

²⁶ Սրբոյն Մահակայ Գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցոյ.-Սոփերք Հայկականք, հ. Բ, Վենետիկ, 1853, էջ 127-128:

էին, որոնք եղել էին *Լուսավորչի* ձեռնասուրս սաները²⁷: *Կարելի է ենթադրել, որ հենց այդ ճանապարհով նա նպատակ ուներ վերականգնել հին հայոց գիրը և այն ևս ի սպաս դնել Ավետարանի քարոզությանը:*

Վերն ասվածի լույսի տակ վստահաբար կարելի է ասել, որ Մաշտոցը Գողթն գալով նպատակ և, թերևս, հանձնարարություն ուներ Գրիգոր Լուսավորչի օրինակով կապ հաստատել տեղի հեթանոս քրմերի հետ՝ հուսալով նրանց մոտ գտնել հեթանոսական մատյաններ և նախաքրիստոնեական հայ դպրության հետքեր, գուցե նաև իր ձեռքի տակ եղած մեհենական գրերը կարդալու գաղտնիքը: Եվ զարմանալի որևէ բան չկա այստեղ. ինչպես քրիստոնյա քահանային անհնար է պատկերացնել առանց աղոթագրքի ու ժամագրքի, այնպես էլ հեթանոս քրմերն էին անբաժան իրենց մեհենական գրքերից և սրբազան խորհրդատետրերից:

Սակայն հեթանոս քրմերը հրաժարվում են ընդունել Մաշտոցի քարոզած կյանքի խոսքը և իրենց զանազանակերպ կուռքերով Գողթնից փախչում են Մարաց կողմերը²⁸: Հավանաբար, նրանց թույլ է տրվել հետները տանել այդ ծանր արձանները, այլապես գավառի իշխան Շաբիթի օգնությամբ Մաշտոցը կարող էր փշրել տալ դրանք: Պատահակա՞ն է արդյոք, որ հետագայում Մաշտոցն իր նորագյուտ հայերեն նշանագրերն առաջինը տարավ նույն այդ Մարաց կողմերը²⁹, ուր փախել էին Գողթան քրմերը: Եվ միայն այստեղ Կորյունի շղարշված խոսքից հազիվ կոսահում ենք, որ Մաշտոցի գործունեությունը Գողթն գավառում քրիստոնեական քարոզությունից զատ այլ նպատակ էր հետապնդում, և դա Կորյունն արտահայտում է իրեն հատուկ ծածկամտությամբ: Նա պատմում է, թե քրմերի փախչելուց հետո [Մաշտոցը] «մտքում դրեց նույնպես ավելի հոգալ համերկրացիներին³⁰ սփռվելու մասին, [ուստի] և ավելացրեց մշտամոռունչ աղոթքն ու բազկատարած պաղատանքն առ Աստված և անդադար արտասուքը: [...] և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՞ ելք գտնի այդ բանի համար»³¹: Եվ շատ օրեր նույն դեգերումների մեջ էր Գողթն գավառում: Նշանակում է՝ Մաշտոցն ինչ-որ բան էր որոնում Գողթնում:

Պատմահայր Մովսես Խորենացին, որ խորաթափանց կերպով կարդում է Կորյունի մանվածապատ մտքերը, պարզ ու մեկին բացատրում է, թե ի՞նչ էր մտքում դրել Մեսրոպը Գողթնում և ի՞նչ էլք էր որոնում հայ ազգի համար. «Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր»³²:

²⁷ Ագաթ., § 840, 845:

²⁸ Կոր., [Ե], էջ 40:

²⁹ Կոր., [Ժ], էջ 54:

³⁰ «Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփռվելոյ» – «զհամաշխարհականս» Մ. Աբեղյանը թարգմանել է՝ «համայն աշխարհի ժողովրդին», նկատի ունենալով հայոց աշխարհը՝ Հայաստանը: Մինչդեռ խոսքը վերաբերում է Մաշտոցի հայրենակիցներին՝ համերկրացիներին:

³¹ Կոր., [Ե], էջ 40:

³² Խոր., Գ. ԽԷ, էջ 317: Այստեղ Մ. Մալխասյանցը թարգմանել է՝ «Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել (՝), և աշխատանքի անձնատուր լինելով՝

Եվ միայն Վաղարշապատում Հայոց աշխարհի եպիսկոպոսների աշխարհահոգ խորհուրդ ժողովելուց հետո, որտեղ որոշում ընդունվեց «ի գիւտ նշանագրացն Հայաստան ազգին հասանել»³³ կամ՝ «հոգալ զգիւտ դպրութեան Հայոց»³⁴, պարզվում է, որ հենց հայոց լեզվի նշանագրերը նկատի ունեն Կորյունը՝ գրելով, թե Գողթնում Մաշտոցը մտքում դրել էր նույնպես ավելի հոգալ համերկրացիներին սփռվելու համար. «Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփռվելոյ»³⁵:

Հենց այն հանգամանքը, որ ըստ Կորյունի և Խորենացու՝ Մեսրոպ Մաշտոցն առաջինը Գողթնի հետ է կապում իր ժողովրդի ցավին մի էլք գտնելու, այսինքն՝ հայոց նշանագրերը գտնելու գաղափարը, համոզիչ ցույց է տալիս, որ նա իսկապես նպատակ էր դրել դեռևս հին հավատը պահպանած գավառում, գուցե նաև Ուտիքի Գիսն կոչված Ճախճախուտ կայանում³⁶ ծվարած հեթանոս հայերի ու նրանց քրմերի մոտ գտնել հեթանոսական շրջանի հայոց գրի և մատենագրության հետքերը:

Իսկ որ Մեսրոպն ու Մահակը նպատակ ունեին նախ և առաջ գտնել նախաքրիստոնեական հայոց գիրը, հաստատում է դարձյալ ինքը՝ Կորյունը, ըստ որի՝ աշխարհահոգ խորհրդից հետո, որտեղ որոշում ընդունվեց «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել», Մեսրոպն ու Մահակը շատ հարցուփորձով ու քննությամբ անձամբ պարապեցին և շատ նեղություններ կրեցին. «Բազում հարցուփորձի եւ քննութեան զանձինս պարապեցուցեալ եւ բազում աշխատութեանց համբերեալ»³⁷: Ինչ էին որոնում շատ հարցուփորձով և քննությամբ, եթե ոչ նախկինում գոյություն ունեցած հայոց գիրը: Եվ սա՝ նախքան դանիելյան կոչված նշանագրերի երևան գալը: Զուր չէ, որ Ղազար Փարպեցին ևս հաստատում է հայոց հին գրի գոյությունը՝ Մաշտոցին վերագրելով հետևյալ խոսքերը, որ բանասերներն աշխատել են այլ ընդ այլո մեկնաբանել. «Մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ եւ ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»³⁸:

* * *

Այս ամբողջ նախագրային շարժումը IV դ. վերջին և մանավանդ հայոց աշխարհի եպիսկոպոսների ժողովը՝ «աշխարհահոգ խորհուրդը», երբ բոլոր եպիսկոպոսները ժողովվել էին Մեծն Մահակի և Մեսրոպի մոտ՝ հայերեն գրերի գյուտի մասին հոգալու՝ «հոգալ զգիւտ դպրութեան Հայոց», չէին կարող աննկատ մնալ ասորի հոգևորականների աչքից, որոնք Պարսկահայաստանի

զանազան փորձերով չարչարվում էր» (Խոր. (Մալիս.), Գ. ԽԷ, էջ 285): Խորենացու բնագրում խոսքը ոչ թե տառեր ստեղծելու մասին է, այլ հայոց լեզվի նշանագրեր գտնելու:

³³ Կոր., [Զ], էջ 42:

³⁴ Խոր., Գ. ԾԲ, էջ 325 – «և ելեալ [Վռամշապուռի] ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Մահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս, հոգալ զգիւտ դպրութեան Հայոց»:

³⁵ Կոր., [Ե], էջ 42:

³⁶ Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ո ռ ա յ ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ա. ԻԷ, էջ 95:

³⁷ Կոր., [Զ], էջ 42:

³⁸ Փարպ., Ա. Ժ, էջ 14:

հայ եկեղեցու կյանքում զգալի դեր ունեին՝ սկսած Գրիգոր Լուսավորչի ժամանակներից: Տեսնելով հետզհետե թափ առնող հայ ազգային գրի ու դպրության շարժումը և լավ հասկանալով իր հանդեպ հայ ժողովրդի մեջ տիրող բացահայտ հակակրանքը՝ ասորի կղերը, քանի որ չէր կարող այլևս շարժման առաջն առնել, որոշեց սկզբից նեթ իր համար ցանկալի հունով տանել Հայաստանում ծավալված հայերեն գրերի ստեղծման գործը, քանի դեռ հույներն այդ չէին արել Հայաստանի իրենց բաժնում: Հաջողելու դեպքում ասորի Եկեղեցին գերակա իրավունք էր ստանում սպասելու, եթե ոչ պահանջելու, որ Սուրբ Գիրքն ասորերեն Պեշիտտոյից³⁹ թարգմանվի հայերեն, ինչպես և կատարվեց իրականում: Այդ գործին լծվեցին գրչության արվեստին հմուտ հին, հեթանոսական շրջանի դպրություններին քաջատեղյակ ասորի մասնագետներ, որոնք Հիպոդիտոս Բոստրացու Ժամանակագրությունից, անշուշտ, տեղյակ պիտի լինեին հեթանոս հայերի ունեցած ուրույն գրի մասին: Ուստի, խոսքը շինծու հայերեն գիր ստեղծելու մասին չէր, ինչպես ենթադրում են որոշ ժամանակակից հետազոտողներ: Քանի որ նրանք լավ գիտեին, որ Հայաստանում գրաստեղծման շարժման զույլ էին կանգնած տարբեր լեզուների մեջ հմուտ դրանց նշանագրերին տիրապետող անձինք, ուստի չէր կարելի վարկաբեկել գրաստեղծման գաղափարը: Անտարակույս, այսպիսի հանգամանքների արդյունք պետք է համարել դանիելյան կոչված նշանագրերի ի հայտ գալը: Յ. Մարկվարտը մինչև իսկ նշում է իրավամբ, թե հայ դպրության գործն ուղղված էր ոչ թե պարսկա-հռոմեական ազդեցությունների դեմ, այլ «ընդդեմ Սելևկիայի կաթողիկոսի ոստնձգությունների. մի կաթողիկոս, որը գորավիզ ունենալով արքայից արքային՝ ձգտում էր դառնալ Երանշահրի բոլոր քրիստոնյաների, սրանց թվում նաև Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների, գերագույն առաջնորդը, և այդ պատճառով էլ իր տիտղոսի մեջ էր ներգրավել նաև Հայաստանը, Գուրջանը (Վրաստան) և Առանը (Ադվանք)»⁴⁰:

Այնուհետև, ըստ Կորյունի, բազում հարցուփորձից և քննությունից հետո Սահակն ու Մաշտոցն իրենց առաջվա փնտրածի մասին (զկանխագոյն խնդրելին) հայտնեցին Վռամշապուհ թագավորին, որն էլ նրանց պատմեց մի ոմն մարդու՝ ասորի ազնվական կամ արզնական⁴¹ եպիսկոպոսի մասին՝ Դանիել անունով կոչվածի, որն անակնկալ մի տեղից գտել էր հայերեն լեզվի աղփաբետների նշանագրեր. «որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերեն լեզուի»: Եվ երբ արքան նրանց պատմեց Դանիելի գտածի մասին («Վասն գտելոյն ի Դանիէլէ»⁴²), նրանք հոժարեցրին արքային՝ հոգ տանել այն պիտույքի համար: Եվ Վռամշապուհն ուղարկեց Վահրիճ անունով մեկին հրովարտականերով մի երեց մարդու մոտ, որին Հաբել էին կոչում, որն ասորի ե-

³⁹ Եբրայական (չին) Կտակարանի ասորերեն թարգմանությունը կոչվում էր Պեշիտտո, որ նշանակում է «պարզ»:

⁴⁰ Մերոպ Մաշտոց, էջ 179-180:

⁴¹ Արզնական կամ արձնական. Արզն կամ Արձն գավառի եպիսկոպոս (Կ ո Ր ի ւ ն. Պատմութիւն վարուց ս. Մաշտոցի, հրատարակեց հանդերձ ներածությամբ և ծանոթություններով Ն. Ակիմյան, Վիեննա, 1952, էջ 79, ծան. 15):

⁴² Կոր., [Զ], էջ 44:

պիսկոպոս Դանիելի մերձավորն էր: Իսկ Հաբելը, այս լսելով, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին, ապա նրանից առնելով՝ ուղարկեց արքային Հայոց երկիրը՝ նրա թագավորության հինգերորդ տարում. «Առաքել առ արքային յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թագավորութեան նորա ի նա հասուցանէր»⁴³: Իսկ արքան միաբան սրբերի՝ Մահակի և Մաշտոցի հետ, Հաբելից ստանալով նշանագրերը, ուրախացավ: Ապա երանելի հոգաբարձուները, առնելով հանկարծացուտ փնտրածը («զյանկարծագիւտ խնդրելին»), արքայից խնդրեցին նաև մատաղ մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը տարածել («արծարծել»)՝⁴⁴: «Արծարծել» Մ. Աբեղյանը թարգմանում է գործադրել: Եվ երբ նրանցից շատերը տեղեկացան, ապա հրաման սվեց ամենուրեք դրան(ց)ով կրթել, «որով և երանելին [Մաշտոցը] հասավ նույնիսկ վարդապետության գեղեցիկ աստիճանի» և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ: Իսկ երբ հասկացան, որ նշանագրերը բավական չեն լրիվ արտահայտելու հայերեն լեզվի սիդորաները՝ կապերը («իսկ իբրև ի վերայ հասեալ, թե չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերեն լեզույն»⁴⁵), ապա Մահակն ու Մաշտոցը կրկին նույն հոգսի մեջ ընկան և միառժամանակ դրան ելք էին փնտրում՝ («յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային եւ նմին ելս խնդրելին ժամանակս ինչ»)՝⁴⁶:

Ղ. Փարպեցին, որ հավաստիացնում է քանիցս, թե Կորյունից է քաղել գրերի գյուտի պատմությունը, հակառակ իր ասածին, բավական տարբեր է ներկայացնում իրողությունը: Երբ Մաշտոցը դիմում է Մահակ կաթողիկոսին՝ հայոց նշանագրերի հարցով, ըստ Փարպեցու, Մահակը հայտնում է նրան, թե ոչ շատ օրեր առաջ խոսք եղավ եկեղեցում այդ պիտույքի անհրաժեշտության մասին, և արքան [պատմեց իրեն], թե մեկը ասած է եղել նրան՝ արքային. «տեսի նշանագիրս հայերեն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում» («տեսա հայերեն նշանագրեր ինչ-որ եպիսկոպոսի մոտ մի գյուղում»)՝⁴⁷: Եվ Մահակը կարծես իր դերն ու առաջնությունը շեշտելու համար կրկնում է անմիջապես. «եւ թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի եւ ինձ նա պատմեաց»: Ապա սուրբ կաթողիկոս Մահակը և երանելի Մաշտոցը միասին մտնում են Վռամշապուհ թագավորի մոտ, և նա մի անգամ ևս վերհիշում է վանականի (այն է՝ Հաբելի) խոսածները՝ («զիսուեցեալսն վանականի»⁴⁸):

Այս բոլորը Փարպեցին ինքն է հորինել՝ ցույց տալու համար, թե Մաշտոցից առաջ Մահակ կաթողիկոսն արդեն Վռամշապուհ արքայի հետ, այն էլ եկեղեցում, ոչ թե արքունիքում, խոսք է բացել հայոց գրի անհրաժեշտության վերաբերյալ, և որ Վռամշապուհն առաջինը Մահակին է հայտնել Հաբել վանականի ասածը ինչ-որ եպիսկոպոսի, այն է՝ Դանիելի մոտ իր տեսած հայերեն նշա-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Կոր., [Զ], էջ 46:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Փարպ., Ա. Ժ, էջ 14:

⁴⁸ Նույն տեղում:

նագրերի մասին: Ընդամին Փարպեցին, չնայած, իր խոսքով, բազմիցս կարդացել է Կորյունի գրածը, մոռանում է հիշատակել հայոց աշխարհի եպիսկոպոսների աշխարհահոգ խորհուրդը և նրա ընդունած որոշումը՝ «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել», որից հետո է միայն Վռամշապուհը պատմում Հարբելից լսածը:

* * *

Ասորի Դանիել եպիսկոպոսի գտած հին հայերեն նշանագրերը մոտ երկու տարի Հայաստանում ամենուրեք ուսուցանելուց հետո պարզվեց, որ դրանք պակասավոր են, և դրանցով հնարավոր չէ լրիվ արտահայտել հայերենի վանկերը (սիդոքաները): Դանիել Ասորին իր գտած հայերեն համը նշանագրերը, որոնց հնչյուններն այլևս անհայտ էին, ասորական այբուբենի օրինակով փորձել է հարմարեցնել IV դ. վերջի հայոց լեզվին, այսինքն՝ կազմել է հայոց լեզվի այբուբեն՝ առանց խորամուխ լինելու լեզվական կառուցվածքի մեջ: Նա հաշվի չի առել հայերենում ձայնավորների «անկախ» գոյությունը, դրանց սղման և նույնիսկ բաղաձայնի փոխարկվելու յուրահատկությունը, ինչպես և դրանց դերը հոլովման ու խոնարհման մեջ: Ըստ իս, Մաշտոցն այդ ընթացքում համակարգել էր իրեն ժամանակակից հայոց լեզվի հնչյունները և կազմել հնչյունային այբուբեն, ուստի համոզված էր, որ հայոց հին նշանագրերը չէին կարող ասորականի նման 22 տառից բաղկացած լինել, չխոսելով արդեն ձայնավորների մասին: Սեմական այբուբենները, այդ թվում ասորականը, բացառապես բաղաձայնավոր էին և ոչ հնչյունային:

Առաջին հնչյունային այբուբենը հունականն է, որի մեջ ինքնուրույն առկա են թե՛ բաղաձայն և թե՛ ձայնավոր հնչյուններն ու դրանց համապատասխան տառերը: Մինչև մ. թ. ա. V դ. բաղաձայնավոր էր նաև հունական այբուբենը, որը ստեղծվել էր փյունիկյան գրի հիման վրա: «Անցումը բաղաձայնավորից վոկալացված (հնչյունավորված) գրին թելադրված էր նրանով, – մատնանշում է Վ. Իստրինը, – որ հունարեն բառերի արմատային հիմքերը (ի տարբերություն փյունիկյանի) կազմված էին հավասարապես ինչպես բաղաձայններից, այնպես էլ ձայնավորներից. հունարեն շատ բառեր իրարից տարբերվում էին միայն ձայնավորներով, և բաղաձայնավոր գրի դեպքում կգրվեին միատեսակ»⁴⁹: Նույն երևույթը առկա է և հայերենում: Հայերեն բառերը կազմված են բաղաձայններից ու ձայնավորներից, և առանց ձայնավորի գրվելու դեպքում նույն բաղաձայններն ունեցող շատ բառեր, որոնք տարբեր իմաստներ են արտահայտում, կունենային նույն ձևը: Օրինակ՝ ծաղիկ, ծղիկ, ծուղակ, ծեղիկ բառերը, ձայնավորները հանելու դեպքում բոլորն էլ կունենան միննույն ծղկ ձևը և ընթերցելիս դժվար է միանգամից վերականգնել բառի նախնական ձևը, որը համապատասխաներ տվյալ բնագրին:

Ուստի և երկու տարի պահանջվեց համոզվելու համար, որ Դանիելի նշանակած բաղաձայն տառերով հայերեն ընթերցելիս առաջ են գալիս բազմաթիվ իմաստային թյուրիմացություններ և բառերի շփոթ, որոնք աղավաղում են շարադրանքի բովանդակությունը, մի բան, որ անհամեմատ ավելի սակավ էր

⁴⁹ В. А. Истрин. Եզվ. աշխ., էջ 336:

պատահում աստրերենում: Դրա համար էլ Խորենացին ասում է, որ հնարավոր չէր այդ մուրացած գծագրությամբ ստույգ հոլովել (փոփոխել) հայերեն բառերի վանկերը. «ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեզենայ բառից հայկականաց հագներգաբար, մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ»⁵⁰:

Հարցը միայն ձայնավոր տառերի բացակայությունը չէ, որին հանգում են մեր հետագա պատմիչները (Աստղիկ, Վարդան Արևելցի) և մեր ժամանակի հնագրագետները (Լեպսիուս, Գարդտհաուզեն, Մյուլլեր և ուրիշներ): Այս պարզ թվացող խնդրի բարդությունն այն էր, որ սեմական լեզուներում խոնարհումը և նույնիմաստ բառերի կազմումը կատարվում է ներքին թեքման միջոցով, այսինքն՝ բառարմատի բաղաձայնների արանքում տարբեր ձայնավորներ միջադրելով, մինչդեռ հայերենն իր բնույթով կցական լեզու է, այսինքն բառերը հոլովվում կամ խոնարհվում են անհնչյունների և մասնիկների կցման միջոցով⁵¹: Ցույց տալու համար ներքին թեքման լեզվի և կցական լեզվի տարբերությունը՝ բերենք երկու-երեք օրինակ. հին եբրայերեն *K-T-L* բաղաձայն արմատից, որի իմաստն է «սպանել, սպանություն», ձայնավորներ մուծելով բաղաձայնների արանքում, ստացվում են նույնիմաստ տարբեր դերբայներ՝ *KeToL* «սպանել» (անորոշ դերբայ), *KoTeL* «սպանող, մարդասպան» (ենթակայական դերբայ), *KaTuL* «սպանված» (հարակատար դերբայ, կրավորաձև)⁵²: Նույն երևույթը տեղի է ունենում և դասական արաբերենում. *K-T-B* (գիր, գրել) բաղաձայն արմատից են՝ *KiTaB* «գիր, գիրք», *uKTuB* «գրի՛ր»: Մինչդեռ, օրինակ, հայերեն «ծղկ» բաղաձայն տառախումբը բառարմատ չէ և չունի որևէ իմաստ, այս պատճառով էլ դրանց արանքում ձայնավորներ մուծելով, կատանանք իրար հետ կապ չունեցող բառեր՝ ծաղիկ, ծղիկ, ծղուկ, ծեղիկ, ծուղակ, ինչպես և անիմաստ՝ ծաղկ, ծիղկ, ծիղակ և այլն:

Այսուհանդերձ, Սահակն ու Մեսրոպը նպատակ չունեին մի կողմ նետել այն նշանագրերը, որոնք արդեն երկու տարուց ավելի Հայաստանում ամենուրեք ուսուցանվում էին որպես հայկական գրեր: Բնական է, որ դրանցից հրաժարվելը և կրթությունը դադարեցնելն անիմաստ կլիներ: Ավելի խելամիտ էր դրանք լրացնելը, որի համար էլ, ըստ Կորյունի, Մաշտոցը Վռամշապուհ թագավորի հրամանով և Սահակ կաթողիկոսի համաձայնությամբ մի խումբ մանուկների հետ գնում է Արամի կողմերը (Ասորոց Միջագետք)⁵³: Այստեղ իր

⁵⁰ Խոր., Գ. ԾԳ, էջ 326:

⁵¹ Բացառություն են կազմում գրաբարում ներդրական հոլովման պատկանող մի քանի բառեր, որոնք հոլովվում են ներքին թեքման միջոցով՝ աստղ-աստեղ, անգղ-անգեղ, օր(ար)-աուր, տարր-տարերք, քոյր-քեռ և այլն (տե՛ս Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1964, էջ 19, 56):

⁵² Հմմտ. В. А. Истрин. Նշվ. աշխ., էջ 261: Միայն հետագայում, հատկապես միջնադարում, եբրայական այբուբենի մեջ ներմուծվեցին, այսպես կոչված, մասոր(ետ)ային նշաններ (ձայնանշաններ), որոնք դրվում են բաղաձայնի վերևում կամ ներքևում՝ կամայական արտասանությունից և իմաստային թուրքիմացություններից խուսափելու համար, այն էլ առավելապես պաշտամունքային տեքստերում (տե՛ս Д. Дирингер. Алфавит. Перевод с английского. Общая редакция, предисловие и примечания И. М. Дьяконова. М., 1963, с. 260, прим. 1):

⁵³ Կոր., [Է], էջ 46:

տարած աշակերտներին ասորի և հունարեն դպրության տալուց հետո, եթե հավատանք Կորյունին, Մաշտոցը սրանից բացի ոչինչ չի անում նշանագրեր ստեղծելու համար, այլ «իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տքնությունները և արտասովյից պաղատանքները, խստամբերությունները, աշխարհահեծ հոգսերը»⁵⁴, և ընթերցողն ու գիտնականը հավասարապես պիտի զարմանան. մի թե միայն աղոթքի և Աստծուն պաղատելու համար էր Մաշտոցը եկել հասել Եդեսիա, որպեսզի գտնի հայոց գիրը: Այլ է պատկերը, երբ դիմում ենք Մովսես Խորենացուն:

Կորյունի «Վարք Մաշտոցի»-ից հետո գրերի գյուտի մասին պատմող երկրորդ կարևոր աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, որը շատ հարցերում առաջնային աղբյուրի նշանակություն է ձեռք բերում: Պատմահայրը բացահայտում է այն հանդիպումները, որոնց մասին Կորյունը լռում է գիտակցաբար: Ըստ Խորենացու, Մերոպյան աշակերտների հետ իջնում է Միջագետք և առաջինը հանդիպում ասորի Դանիել եպիսկոպոսին⁵⁵: Վերջինս պատմել է Մերոպյին, թե ինչպես է անակնկալ գտել հայոց լեզվի նշանագրեր՝ աղփաբետներ («յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»)⁵⁶, որոնք իրեն՝ Դանիելին հանդիպել էին այլոց դպրություններում («յայլոց դպրութեանց թաղեալք և յարութեալք դիպեցան»)⁵⁷: Ակներևաբար, այս տեղեկությունը պատկանում է Դանիելին, և այն Կորյունին է փոխանցել նրա ուսուցիչ Մաշտոցը հետագայում՝ մտաբերելով իր հանդիպումը Դանիել եպիսկոպոսի հետ Արամի կողմերում:

Այն, որ Մաշտոցը վստահությամբ է վերաբերվում Դանիելի պատմածին և այլալեզու դպրություններում կատարած նրա պրպտումներին, վկայում է, որ ասորի եպիսկոպոսը հին դպրությունների գիտակ էր, և որ հիշյալ նշանագրերն ամեննին էլ Դանիելի հորինածը չեն, ինչպես ենթադրում են հետազոտողներից ոմանք մեր օրերում՝ իրենց Մաշտոցից ավելի բանիմաց և իրազեկ կարծելով: Եվ քանի որ հին հայերեն նշանագրերը վաղուց թաղված էին ուրիշների (այլ ազգերի) դպրություններում անհայտության մեջ, կնշանակի՝ մոռացվել էին դրանց հնչյունական արժեքները, այլ կերպ ասած՝ դրանք համադրված չեն եղել որևէ ծանոթ օտար այբուբենի հետ: Ուստի, Դանիել եպիսկոպոսը ստիպված է եղել իր գտած «համր» նշանագրերը, Խորենացու խոսքով՝ հարմարեցնել հայերեն լեզվին՝ ասորական բաղաձայնավոր այբուբենի օրինակով:

Խորենացուց տեղեկանում ենք, որ Մերոպը, Դանիելի մոտ առաջվանից ավելի բան չգտնելով, ստիպված է լինում դիմել գրի և գրչության մեջ ճարտար հեթանոս դպրապետների, որոնց հետ շփվելն իսկ շրջահայաց Կորյունը, քրիստոնեական տեսակետից անպատշաճ համարելով, լռության է մատնում: Հենց Խորենացու այս խոսքը՝ առաջվանից ավելի բան չգտնելով «և ոչ աւելի ինչ

⁵⁴ Կոր., [Ը], էջ 48-49:

⁵⁵ Խոր., Գ. ԾԳ, էջ 326:

⁵⁶ Կոր., [Զ], էջ 42:

⁵⁷ Կոր., [Զ], էջ 46:

գտեալ քան զառաջինն»⁵⁸, հաստատում է, որ Մեսրոպն իրապես հին հայերեն այբուբենի պակասող նշանագրերն էր որոնում: Անտարակույս, Դանիելն է խորհուրդ տվել Մեսրոպին՝ պակասող նշանագրերը, ինչպես և ամբողջ այբուբենի հին հնչյունային համակարգի վերծանումը որոնել Եդեսիայի հռչակավոր դիվանում, որտեղ ինքն այլ դպրությունների մեջ հայտնաբերել էր հայոց հին գրերը: Ըստ որում, «յայոց դպրութեանց» քրիստոնյայի լեզվով կարող է նշանակել նաև «այոց՝ հեթանոսների դպրություններում»: Եվ ահա, Դանիելի մոտ առաջվանից ավելի բան չգտնելով, հենց նույն Դանիելի խորհրդով Մեսրոպն անցնում է Եդեսիա, ներկայանում դիվանի իշխանին (պետին)՝ հեթանոս ճարտասան ոմն Պղատոնի, որն ուրախությամբ ընդունեց նրան և «ինչքան որ հայերեն խոսքեր միտը բերում էր՝ հավաքելով և շատ ջանք թափելով, օգուտ չտվեց հռետորը և խոստովանեց իր սոգիտությունը»⁵⁹:

Ուսումնասիրողները սահել-անցել են Պատմահոր այս հատվածի վրայով՝ նշանակություն չտալով հատկապես այս բառերին. «գոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զտգիտութիւն խոստովանեաց հռետորն»⁶⁰: Մինչդեռ դրանք բացահայտում են Եդեսիայի դիվանը գալու Մեսրոպի բուն նպատակը: Պարզվում է, որ հեթանոս դիվանապետը գիտեր հայերեն, իսկ Եդեսիայի դիվանում պահվում էին հայոց լեզվով հին մատյաններ, և Պղատոն հեթանոս ճարտասանն իր իմացած հայերեն բառերով ջանում էր ընթերցել, վերծանել «համր» տառերը: Բայց այդ գիրն այլևս հնարավոր չէր կարդալ, որովհետև կորսվել էին դրանց հնչյունային արժեքները: Մաշտոցի հետ ճիշտ նույն բանն էր կատարվում, ինչ որ այսօրվա երաժշտագետի հետ, որն իր առջև տեսնում է միջնադարյան հայկական խազերը, բայց անկարող է հնչեցնել դրանց երաժշտությունը: Ակնհայտ է, որ հայերեն խոսքերը Պղատոնը փորձում էր կապել ձեռքի տակ եղած հին գրերի հետ, որ պահվում էին դիվանում, և, չկարողանալով այդ գրերը հարմարեցնել հայոց լեզվին, այս հեթանոս ճարտասանը Մեսրոպին հայտնում է, թե «առաջներում ինքն ունեցել է մի վարդապետ՝ [հին դպրությունների մեջ] շատ հմուտ, որ հետո ճարտարների գրքերը Եդեսիայի նույն դիվանից առնելով, գնացել և քրիստոնեություն է ընդունել, անունը Եպիփանոս»⁶¹: Ուրեմն, այստեղ էլ Խորենացու խոսքը հին գրչության մեջ ճարտար մի հեթանոս վարդապետի մասին է:

Դարձյալ հարց է ծագում՝ ի՞նչ գրքեր էր իր հետ տարել հեթանոս Եպիփանոսը. անկասկած, դրանք հեթանոսական գրքեր են եղել, որ ոչնչացման վտանգից փրկելու նպատակով Եդեսիայի գրադարանից տարել էր Եպիփանոսը, անշուշտ, օգտվելով հեթանոս դիվանապետի աջակցությունից: «Որ փնտրես գտնես, նա կկատարի քո փափագը», – խորհուրդ է տալիս դիվանապետը: Այստեղ էլ տեսնում ենք, որ Մեսրոպի փափագը կապված էր հեթանոս դպրապետի և նրա տարած հեթանոսական գրքերի հետ: Բսկ այդ փափագը ակնհայտորեն հայոց հին գիրն էր՝ այդ գիրը վերծանելն ու խոսեցնելը:

⁵⁸ Խոր., Գ. ԾԳ, էջ 326:

⁵⁹ Խոր. (Մալխ.), Գ. ԾԳ, էջ 293:

⁶⁰ Խոր., Գ. ԾԳ, էջ 326:

⁶¹ Նույն տեղում (թարգմանությունը մերն է– Ա. Մ.):

Եղեսիայի Ռարուլաս եպիսկոպոսի օգնությամբ տեղեկանալով Եպիփանի գնացած վայրի մասին՝ Մերոպը Փյունիկեով անցնում է Սամոս⁶² (ըստ Կորյունի՝ Մաշտոցը գնում է Սամոսատ քաղաքը՝ միայն հայոց նշանագրերը Եղեսիայում գտնելուց հետո)⁶³: Բայց այդ ժամանակ հիշյալ Եպիփանն արդեն մեռած էր, և Սամոսում Մերոպը հանդիպում է նրա աշակերտ Հոնփանոսին, որը հելլեն գրչության հրաշալի արվեստ ուներ, և որի մոտ պետք է մնացած լինեին Եղեսիայի դիվանից Եպիփանի բերած հեթանոսական գրքերը: Բայց, ինչպես գրում է Խորենացին, սրանից էլ շահ չգտնելով, Մերոպն ապավինում է աղոթքի:

Եվ այսպես, Պատմահայրը մեզ բերում հասցնում է ճիշտ այնտեղ, որտեղ կանգ էր առել Կորյունը: Վերջինս միայն անցողակի նշում է Եղեսիայում Մաշտոցի հեծեձանքներն ու խստամբերությունները, որից հետո նա՝ Մաշտոցը, իր սուրբ աջով հայրաքար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրերը: Բայց այն, ինչ այստեղ հաղորդում է Խորենացին, դարձյալ ավելին է, քան պատմում է Կորյունը. «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով ստեղծեց մեր նշանագրերը»⁶⁴:

Վերն ասվածի լույսի տակ միանգամայն նոր իմաստ է ստանում Կորյունի այն տարօրինակ տեղեկությունը, որ Եղեսիայից նոր-նոր Վաղարշապատ վերադարձած Մաշտոցը, ուրախության տոնական օրերն անցնելուն պես, թագավորից շուտափույթ հրաման է առնում՝ սկսելու [ուսուցանել] Մարաց խուժադուժ կողմերը (Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանցն Մարաց)⁶⁵, մինչդեռ սպասելի էր, որ նորագյուտ այբուբենի ուսուցումը սկսվեր հենց մայրաքաղաքից: Եվ Մաշտոցն առաջինը գնում է հեռավոր Մարաց կողմերը՝ Ատրպատականի սահմանում՝ Պարսպատունիք և Մարանդ գավառները⁶⁶, որ գրեթե կտրված էին հայկական միջավայրից:

⁶² Կղզի Էգեյան ծովում:

⁶³ Կոր., [Բ], էջ 49:

⁶⁴ Խոր. (Մալխ.), Գ. ԾԳ, էջ 293:

⁶⁵ Կոր., [Ժ], էջ 54:

⁶⁶ Ն. Ալիկյանը և վերջերս էլ Արտ. Մաթևոսյանը անհիմն տեղաշարժում են Կորյունի այս և մյուս հատվածները՝ կարծելով, թե դրանք իրենց տեղում չեն: Աբեղյանը «Մարաց կողմեր» անվան տակ հասկանում է Արաքսից հարավ գտնվող լեռնային Ղարադաղը, որը Հին Հայաստանի Վասպուրական նահանգի մասն էր կազմում՝ Պարսպատունիք և Մարանդ գավառներով (Կ ո Ր յ ու ն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 144, ծանոթ. 55): Մ. Երեմյանը Ղարադաղի լեռնային շրջանում, որ Ստրաբոնը անվանում է Հայկական լեռներ, տեղադրում է միայն Պարսպատունիք գավառը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 67). տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 17): Մ. Երեմյանի կարծիքով «Մարաց ամուր աշխարհը» գրավում էր Նիխորական, Մահկեր-տուն և Դասն հայկական գավառների տարածքը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»,

Կորյունի բացատրությունը, թե Մարաց կողմերը դժվարամատչելի էին ոչ միայն «վասն դիւական սատայանակիր բարուցն ճիւադութեան, այլ և վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին», հիմք չի կարող լինել, որ առաջինը հենց այդ կողմերում սկսվեց կրթությունը, որովհետև չափազանց անկիրթ ու վայրենի միջավայրը բոլորովին էլ հարմար տեղ չէ նորաստեղծ այբուբենը փորձելու համար, չխոսելով արդեն անակնկալ վտանգների մասին: Բացի այդ, Սյունիքում և այլուր նույնպես կային, Կորյունի խոսքով, «առաւել զազանամիտ, վայրենագոյն, ճիւադարարոյ»⁶⁷ վայրեր, որ Վաղարշապատից այդչափ հեռու չէին, և որտեղ Մաշտոցը կարող էր ավելի ապահով կրթել:

Ոչ պակաս տարօրինակ է, որ հեռավոր Մարաց կողմերից Վաղարշապատ վերադառնալով՝ Մաշտոցը Սահակ կաթողիկոսի հետ նոր միայն սկսում են «աստվածային մշակության գործը, ավետարանական արվեստը թարգմանել, գրել և ուսուցանել»⁶⁸: Իսկ երբ իրերի (այսինքն՝ գրերի) հաստատությունը ստուգեցին, «ավելի համարձակ ու ավելի շատ էին նորագյուտ ուսման աշակերտներ հավաքում (Վաղարշապատում)՝ սովորեցնելու, կրթելու և պատրաստելու անգետ մարդկանց քարոզության համար»⁶⁹: Այնուհետև երանելի Մաշտոցը համաձայնություն առավ, որ Սահակ կաթողիկոսը, որ այդ ժամանակ դեռևս եպիսկոպոս էր, կայենականների մեջ (այսինքն՝ արքունի կայանում և ազատագունդ բանակում) սերմանի կենաց խոսքը, իսկ ինքը՝ հեթանոսների սփյուռքում⁷⁰: Որից հետո Մաշտոցն ուսուցանելու գնաց Գողթն և Սյունիք: Այստեղից պարզվում է, որ «հեթանոսների սփյուռք» ասելով, Կորյունը նկատի ունի մայրաքաղաքից ոչ շատ հեռու գտնվող Գողթն ու Սյունիք գավառները: Եվ, ուրեմն, ինչը պետք է ստիպեր Մաշտոցին՝ առանց նույնիսկ մայրաքաղաքում նոր գիրն ուսուցանելու, նախքան գրերի գործադրումն ու ստուգումը, և, վերջապես, նախքան մոտակա «հեթանոս սփյուռքը» կրթելը, գնալ հասնել հեռավոր հեթանոս գավառները, և առաջինը նորագյուտ այբուբենով կրթելու Մարաց կողմերը⁷¹, որտեղ հայտնվելն անգամ վտանգավոր պիտի լիներ քրիստոնյա վարդապետի համար:

էջ 65): Ըստ Է. Դանիելյանի՝ «Մարաց ամուր աշխարհը» ընդգրկում էր Ատրպատականի ծայրամասային՝ լեռնային դժվարամատչելի շրջանները բնակեցված իրանական մի քանի ցեղերով, և այն չպետք է նույնացնել Նիխորական, Մահկեր-տուն և Դասն հայկական գավառների տարածքի հետ (Է. Լ. Դանիելյան. Հայ-բյուզանդական հարաբերությունները և Մարաց իշխանը 646թ – ՊԲՀ, 1983, № 4, էջ 24-27: Տե՛ս նաև նույն ինչ՝ Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 199):

⁶⁷ Կոր., [ԺԴ], էջ 60:

⁶⁸ Կոր., [ԺԱ], էջ 54:

⁶⁹ Կոր., [ԺԲ], էջ 58 (թարգմանությունը մերն է – Ա. Մ.):

⁷⁰ Կոր., [ԺԳ], էջ 60:

⁷¹ Մարաց կողմերի ուսուցման դրվագը (Կոր., [Ժ], էջ 54) իսկապես մի տեսակ մեկուսի դիրք է գրավում Մաշտոցի կրթած մյուս գավառների նկատմամբ ոչ միայն նրանով, որ բնագրում հեռու է ընկած դրանցից (Գողթն – [ԺԳ], Սյունիք – [ԺԴ], այլ հատկապես նրանով, որ Մաշտոցը այդ գավառները (ի սփիւռս հեթանոսաց) ուսուցանում է սոսկ Սահակ կաթողիկոսի հավանությամբ, և միայն Մարաց կողմերի կապակցությամբ է Վոսմշապուհ թագավորը հրաման տալիս սկսելու կրթությունը նորագյուտ հայերեն նշանագրերով: Կարելի է ենթադրել, որ Մարաց կողմերում ապաստանած Գողթան քրմերի համար Վոսմշապուհ թագավորի

Գաղտնիքը կրացահայտովի, եթե հիշենք Մաշտոցի առաջին քարոզչությունը Գողթնում մի քանի տարի առաջ, երբ տեղի քրմերը ոչ առանց նրա թույլտվության, իրենց կուռքերի արձաններով ու մատյաններով հեռացան Գողթնից և ապաստանեցին Մարաց կողմերում: Այժմ էլ Մաշտոցը Վոսաճապուհ թագավորի հրամանով, իր նորագյուտ այբուբենը տանում է նույն այդ Մարաց կողմերը՝ ներկայացնելու այստեղ ապաստանած իր նախածանոթ Գողթան քրմերին, ո-

հրամանն ավելի ազդեցիկ էր և վստահության արժանի, քան քրիստոնյա հովվապետի հրահանգը: Այլ բացատրություն չգտնելով՝ որոշ ուսումնասիրողներ այն կարծիքն են հայտնել, իբր Գորյունի բնագրում առանձին դրվագներ ենթարկվել են տեղաշարժման: Ն. Ակինյանը Գորյունի «Պատմություն վարուց Ս. Մաշտոցի» հրատարակության մեջ անհիմն վերաձևում է Գորյունի բնագիրը՝ աղվանական գիր հորինելու և ամբողջ Աղվանքն ուսուցանելու [ԺԷ] հատվածը փոխադրելով Ս. Աբեղյանի [ԺԱ] հատվածի տեղում՝ Բաղասական կողմերի վարդապետության հետ, իսկ Բաղասական կողմերից առաջ մտցնում է Մարաց կողմերի ուսուցման [Ժ] հատվածը: Արդյունքում ստացվում է, որ Մաշտոցը Գողթնում և Սյունիքում նորագյուտ այբուբենը տարածելուց հետո անմիջապես ստեղծում է աղվանից գիրը և, Աղվանք գնալով, կրթում է տեղի բնակիչներին, ավելի վաղ, քան վրաց գիրը հորինելն ու Վիրքը կրթելը և նախքան Հռոմոց Հայաստանում հայոց գիր տարածելը: Այսպիսի ետևառաջությունը ոչնչով արդարացված չէ: Ըստ Ն. Ակինյանի՝ «կողմանք Մարաց» գավառը չպետք է շփոթել Մարաց ամուր աշխարհի հետ (Գորին. Պատմություն վարուց ս. Մաշտոցի, էջ 91, ծան. 45): Նա այս Մարաց կողմերը տեղադրում է Աղվանքում՝ Բաղասական կողմերին կից, իսկ մարերին իրենց «խեցրեկագոյն և խոշորագոյն» լեզվով (ըստ Գորյունի բնորոշման) նույնացնում է Աղվանքի բուն բնակիչների՝ գարգարացիների հետ միայն նրա համար, որ սրանց լեզուն ևս խորեհացին անվանում է «կոկորդախոս, աղխագուր, խժական, խեցրեկագոյն» (Խոր., Գ. ԾԳ, ԾԴ, էջ 329): Այս կետում Ն. Ակինյանը կարծես որոշակի կոպան ունի: Բայց այդ դեպքում էլ դուրս է գալիս, որ Աղվանքում բազում մանուկներ կրթելուց և աստվածային գրքերը թարգմանելուց հետո, երբ «մի սկիթարթում Աղվանքի վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարո մարդիկ մարգարեագետ, առաքելաձանոթ և ավետարանաժառանգ դարձան» (Կոր., [ԺԷ], էջ 71, 73), հանկարծ միանգամայն անտեղի ասվում է (ըստ Ն. Ակինյանի նորամուծության), թե Մաշտոցը «թագավորից հրաման առավ սկսելու կրթությունը Մարաց խուժադուժ կողմերից»: Էլ ինչպես կարող էին մարերը նույն գարգարացի աղվանները լինել:

Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա ձեռագրագետ, արժանահիշատակ Արտ. Մաթևոսյանը «Վարք Մաշտոցի» նոր խմբագրության մեջ, իր նպատակին հարմարեցնելով, Մարաց կողմերի ուսուցման դրվագը Գորյունի բնագրի [Ժ] հատվածից փոխադրել է [ԺԴ] հատվածի սկիզբը՝ Գողթան գավառից հետո և Սյունիքից առաջ: Դրանով իսկ Արտ. Մաթևոսյանը խախտում է ոչ միայն Գորյունի բնագիրը, այլև Վոսաճապուհ թագավորի հրամանը, ըստ որի Մաշտոցն առաջինը պետք է Մարաց կողմերից սկսեր նորագյուտ նշանագրերով կրթելը. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց» (Կոր. [Ժ], էջ 54): Մինչդեռ ըստ նոր խմբագրության, Մաշտոցը Գողթան գավառը ուսուցանելուց հետո է միայն շուտափույթ հրաման ստանում թագավորից կրթությունը սկսելու մասին (Կ ո թ ի ն. Վարք Մեքսիկոյ Մաշտոցի, հրատ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994, [ԺԴ], էջ 94): Երկրորդ արտառոց վրիպումը, որ թույլ է տրվել նշված տեղափոխությանը, պետք է հարուցեր պատմական աշխարհագրության մասնագետների անհամաձայնությունը: Գորյունի բնագրում Մաշտոցը նախ ուսուցանում է Գողթան գավառը, ապա անցնում սահմանակից Սյունիք, ուստի և Գորյունն իրավունք ունի գրելու. «Ապա յետ այնորիկ (Մաշտոց) ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհս ելանէր» (Կոր., [ԺԴ], էջ 60): Բայց երբ Արտ. Մաթևոսյանը Մարաց կողմերը բերում մտցնում է Գողթնի և Սյունիքի մեջ, ապա այլևս չի կարելի ասել, թե Մարաց կողմերից Մաշտոցը «ի սահմանակիցս Սիւնական աշխարհն ելանէր», որովհետև Մարաց կողմերը գտնվում էին Ատրպատականի սահմանում (տե՛ս սույն հոդվածի 66 ծանոթ.), և տեքստի սխալ փոխադրման հետևանքով Պարսպատունիքը թյուրիմացաբար դառնում է Սյունիքին սահմանակից:

որոնք հնուտ էին հայ հին գրչության արվեստին: Ակներն, Մաշտոցը ցանկանում էր պարզել քրմերի կարծիքն իր նոր այբուբենի մասին, ինչպես և ճշգրտել իր ստեղծած նշանագրերի գծագրական նրբությունները հայ ավանդական գեղագրության՝ գրչական արվեստի կանոններով, որով գրեթե ի չիք էր դառնում հեղինակ գրիչ Հռոփանուսի ոճագրական ազդեցությունը: Անհրաժեշտ էր, ի վերջո, լիակատար հնչյունական ընդհանրության բերել Մաշտոցի օգտագործած հայ հին նշանագրերը Գողթան քրմերի ունեցած հին հայկական գրերի հետ: Եվ, ըստ երևույթին, իր բերած հայերեն այբուբենով և անձնուրացությամբ Մաշտոցը շահել է Գողթան քրմերի պատկառանքը, և նրանք տրամադրել են իրեն հին բնագրերը, որոնց հետ բաղդատելով, Մաշտոցը համոզվել է, որ իր նշանագրերը լիովին համընկնում են հին հայկական տառանիշերի պատկերային ու հնչյունական համակարգին: Եվ այժմ միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու է Մաշտոցն իր նորագյուտ այբուբենը նախ և առաջ տանում հեռավոր Մարաց կողմերը, այն, որ Մարաց կողմերում ուսուցման համար անհրաժեշտ է եղել թագավորի հրամանը, իսկ մյուս գավառներում ուսուցումը Մաշտոցը կատարում է Սահակ եպիսկոպոսի հավանությամբ, նույնպես հաստատում է, որ թագավորի հրամանն ուղղված էր այստեղի հեթանոս քրմերին, որոնք չէին ենթարկվում քրիստոնյա հովվապետի հրահանգին:

Այսպիսով, Մարաց կողմերում ավարտվում է գրաստեղծման փուլը և այնուհետև Վաղարշապատում սկսվում է գրի գործադրման շարժումը. միայն այսպես ընկալելու դեպքում տեքստի շարունակությունը դառնում է լիովին տրամաբանական. «Ետ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել»⁷²: Կորյունը, հարկավ, չէր կարող Մաշտոցին սրբացնող Վարքում ուղղակի հիշատակել նրա գաղտնի առնչությունները քրմերի հետ, որոնց նպատակն էր հայոց հին գիրն ի սպաս դնել հայ ժողովրդի և եկեղեցու շահերին, ինչպես հելլենական հեթանոս գիրը ծառայում էր հույն ուղղափառ եկեղեցուն:

Ինչպես ասվեց, հայոց նշանագրերը գտնելուց առաջ Մեսրոպն անձամբ կազմել էր հայոց լեզվի հնչյունային այբուբենը, որն արտացոլում էր IV դ. վերջի հայերեն կենդանի լեզվի զարգացման մակարդակը: Եվ, ուրեմն, հայոց հին գիրը վերականգնելով, նա ինքն է իր կազմած հնչյունային այբուբենի հիման վրա հնչյուններ և անուններ տվել Դանիելի գտած նշանագրերին ու ինքն էլ լրացրել պակասող տառանիշերը, որոնց թվի վերաբերյալ տարբեր տեղեկություններ են տալիս Անանիա Շիրակացին, Ասողիկը, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և այլք: Մակայն Դավիթ Անհաղթի անունով V դարից ավանդված հանելուկներում գտնում ենք մի թվաբանական հանելուկ՝ «չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան. այժմ եմ երիցս երկոտասան»⁷³: Անկասկած, հեղինակը նկատի ունի հայոց այբուբենը, որն առաջ ուներ 24 տառ (2

⁷² Կոր., [ԺԱ], էջ 54:

⁷³ Բնաստուծին Դավթի Քերթողի. – «Բազմավեպ», 1848, էջ 192: Զարմանք է շարժում, երբ հայոց գրերի 1600-ամյակի առթիվ կայացած միջազգային գիտաժողովում որոշ գեկուցողներ հայտարարում էին, իբր դանիելյան նշանագրերի թվի մասին հայ մատենագրության մեջ պահպանված ամենավաղ տեղեկությունը վերաբերում է XII–XIII դարերին:

(12), իսկ այժմ՝ 36 (3(12): Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է դանիելյան և մեսրոպյան այբուբենների պարունակած տառերի քանակին: Դավիթ Անհաղթը ժամանակով ամենամոտն է գրերի գյուտին, ուրեմն և նրա տվյալներն ավելի մոտ են ճշմարտությանը, քան Շիրակացու և հաջորդների հաղորդածը: Ըստ այսմ, հայոց հին նշանագրերից այբուբեն կազմելիս Դանիել Ասորին բավարարվել էր միայն 24 տառով, իսկ մեսրոպյան այբուբենն ունի 36 տառ: Կնշանակի, Մեսրոպն ավելացրել է 12-ը՝ ոչ միայն 6 ձայնավոր (ա, ե, է, ը, ի, ո), այլև նոր բաղաձայն հնչյուններ՝ էլնելով իր կազմած հնչյունային նոր այբուբենից:

Հետազոտողներից շատերը, սկսած Ք. Պատկանյանից, ենթադրում են, թե դանիելյան նշանագրերը արամեական տառեր են եղել⁷⁴: Հր. Աճառյանը ևս կարծում է, որ «ամբողջ թյուրիմացությունը, որին զոհ գնացին թե՛ Դանիելը և թե՛ Մեսրոպը, արամեական, հին ասորական և արամյան հայ բառերի շփոթությունից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ինչ-որ արամեական հնացած տառեր»⁷⁵: Դժվար է համաձայնել մեծ լեզվաբանի այս տեսակետին: Նախ, ասորի եպիսկոպոսը, ինչպես և Մեսրոպը, չէին կարող գաղափար չունենալ արամեական գրի մասին, որով գրված էր ոչ միայն Թարգումը՝ եբրայական կտակարանի արամեերեն թարգմանությունը, այլև բուն եբրայական կտակարանի գրքերի մեծ մասը: Արամեերեն գիրն օգտագործվում էր նաև պահլավերենում: Նույնիսկ Կորյունն Ասորոց Միջագետքն անվանում է «կողմանք Արամի»: Եվ հետո, «Արամեան» բառը հայ մատենագրության մեջ առաջինը Խորենացին է գործածել 470-ական թվերին՝ «հայ, հայկական» իմաստով, ինչպես՝ «հինքն Արամագնեայց» (Խոր., Ա. Զ, էջ 27), «Արք Արամեանք» (Խոր., Բ. ՂԲ, էջ 247), «Արամեան ազն» (Խոր., Բ. ԻԹ, էջ 293): Սրան հակառակ, Ն. Ակինյանի կարծիքով դանիելյան այբուբենը հույն և ասորի, թերևս և այլ այբուբենների մի համադրություն է եղել՝ Աղձնիքի հայ բնակչությանը գրագիտության մերձեցնելու համար⁷⁶: Մի թե՛ Սահակն ու Մեսրոպն այնքան միամիտ էին, որ հույն և ասորի տառերի խառնուրդն ընդունեին իբրև հայկական գրեր: Չավեշտական է, երբ մեր ժամանակի որոշ ուսումնասիրողներ իրենց թյուրամտությունները վերագրում են V դ. մեր մեծ լուսավորիչներին, որոնց մասին գերմանացի խոշոր հայագետ Յ. Մարկվարտը գրում է. «Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սահակն իրենց մտքի ուժով հայ ժողովրդին եկեղեցական ու ազգային ինքնագիտակցության զարթոնքի հասցրին և այս ամենը համեմատում ենք այն դանայան պարզևի հետ, որը ֆրանկ Պիպինը, քաղաքական ու եկեղեցական իշխանության բոլոր միջոցներն իր ձեռն ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին՝ տեսնում ենք, որ Պիպինը և նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են երևում մտքի այդ երկու հսկաների հանդեպ»⁷⁷:

Ինչպես տեսանք, Մեսրոպն ամեն կերպ ձգտում էր հեթանոս ճարտասանների օգնությամբ նրանց մատյաններում գտնել հայոց հին գիրը և դրանով իսկ

⁷⁴ C. Patkanyan. Recherches sur la formation de la langue arm.— JAS, 1870, p. 148–151.

⁷⁵ Հր. Աճառյան. Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 158:

⁷⁶ Կորյուն. Պատմություն վարդուցի. Մաշտոցի, էջ 79, ծան. 15:

⁷⁷ Մեսրոպ Մաշտոց, էջ 125:

վերականգնել կապը հին հայոց գրավոր մշակույթի հետ: Այդ համատ որոնումները վկայում են նաև, որ հին հայերեն գիրը պետք է որ ուրիշներից շատ տարբեր լիներ իր ինքնատիպությամբ. այն չէր կարող ո՛չ հունական լինել, և ո՛չ արամեա-ասորական, այլապես որոնել-փնտրելու հարկ չէր լինի: Օտար հնագրագետների կողմից հատկապես ընդգծվում է մաշտոցյան գրի գծագրական ինքնատիպությունը և հայոց լեզվի հնչյունային համակարգը լիարժեք արտահայտելու հատկությունը: «Հայոց այբուբենի տառային-հնչյունային կազմը, – գրում է Վ. Իստրինը, – Մաշտոցը կառուցել է հայոց լեզվի հնչյունաբանության գիտական խոր վերլուծության հիման վրա, որ շատ ճշգրիտ և լրիվ է արտացոլում նրա այբուբենը: Մաշտոցի ստեղծած տառերի գծագրությունը սուսկ հեռավոր կերպով է հիշեցնում հունական և ասորա-արամեական գիրը, բայց դրա փոխարեն օրգանական սերտ կապի մեջ է գտնվում հայկական ժողովրդական զարդանախշերի հետ»⁷⁸:

Ինչպես վկայում է Ագաթանգեղոսի Պատմությունը (§ 499 և հաջ.), Մահակը և Մեսրոպը հանձարեղորեն օգտագործեցին Պենտեկոստեի հրաշքը՝ Աստվածաշունչը հայերեն թարգմանելու իրավունքը նվաճելու համար, երբ Երուսաղեմի վերնատանը ժողովված առաքյալների վրա իջան կրակի լեզուներ, և նրանք սկսեցին խոսել տարբեր ազգերի լեզուներով: Հիսուսը 72 առաքյալ ուղարկեց ընդ ամենայն տիեզերս՝ 72 բաժանված ազգերի լեզուներով իր Ավետարանը քարոզելու: Նույնպիսի աստվածային տեսիլքով էլ Մեսրոպ Մաշտոցին շնորհիվեց հայոց հին գիրը, որը նա նորոգեց և վերածնեց իր սուրբ աջով:

Ուսումնասիրողների մի ստվար խումբ՝ հայագրի և օտար, որոնք կտրակաճապես մերժում են նախամաշտոցյան հայոց գրի և դպրության գաղափարը, ի վերջո, հարկադրված են պնդել, թե Մաշտոցը հայերեն այբուբենը ստեղծել է հիմնականում հունարեն տառերի ձևափոխման միջոցով՝ այսինքն հայոց այբուբենի հիմքում դնում են հունարեն գիրը՝ առնվազն 20 և ավելի տառանշան (Լագարդ, Լեպսիուս, Հ. Հյուբշման, Գարդոսիանոս, Ս. Վերեր, Գ. Մեննիշյան, Հ. Աճառյան, Է. Ադայան, Ա. Աբրահամյան)⁷⁹: Այստեղ տեղին է բերել Յ. Մարկվարտի վճռական առարկությունը՝ ընդդեմ հայոց այբուբենի հունական ծագման վերաբերյալ վարկածների. «Եթե Մաշտոցը Դանիելի նշանագրերի փոխարեն հիմք ընդունած լիներ հունական այբուբենը՝ ապա երկաթագրերի վրա գցված առաջին իսկ հայացքից կերևար հայկական այբուբենի հունական ծագումը, մի բան, որ առկա չէ: Այս պատճառով էլ մեր հիմնական ուշադրությունը կենտրոնանում է Դանիել եպիսկոպոսի այբուբենի վրա»⁸⁰: Դրան հակառակ մի ուրիշ խմբի կարծիքով էլ Մաշտոցը հիմնականում օգտվել է փյունիկյան (քամական) կամ արամեական (ասորա-սեմական) այբուբեններից (Բ. Հարությունյան, Ն. Տադավարյան, Ֆր. Մյուլլեր, Ա. Գարագաշյան, Գ. Սևակ, Ա. Փերիխանյան): Յ. Մարկվարտը լուրջ առարկություններ ունի նաև այն ուսումնասիրողների դեմ, որոնք մաշտոցյան այբուբենի աստղծր ասորա-սեմական էին

⁷⁸ В. А. И с т р и н. Եզվ. աշխ., էջ 356:

⁷⁹ Այս կարծիքների մասին տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 504-508, Ա. ր. ր ա հ ա մ յ ա ն. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 46-49:

⁸⁰ Մեսրոպ Մաշտոց, էջ 162:

համարում. «Արդեն 400 թվականին ասորական շատ նշանագրեր այնքան նոտրագիր էին դարձել, որ հաճախ իրարից հազիվ էին տարբերվում: Մյուս կողմից՝ սակավաթիվ տառեր ունեցող մի միջին իրանական այբուբեն չէր կարող հիմք ծառայել հնչյուններով այնքան հարուստ հայերենի այբուբենի համար: Այդ այբուբենները բոլորն էլ այն մեծ թերությունն ունեին, որ բազմաթիվ տառեր համընկնում էին իրար հետ, մի երևույթ, որը իր առաջընթացն ապրեց ակնհայտորեն սասանյան ժամանակներում: Եթե այս այբուբենները – նույնիսկ հաշվի չառած ձայնավոր նշանների նրանց պակասը – ի վիճակի չէին ամբողջովին և որոշակի ներկայացնելու իրանական հնչյունական համակարգը՝ ապա բնականաբար նրանցից որևէ մեկն ավելի պակաս ընդունակ պետք է լիներ հիմք հանդիսանալու անհամեմատ ավելի հարուստ և բազմաբղետ հնչյունական համակարգ ունեցող հայերենի այբուբենի համար»⁸¹: Իր հերթին մաշտոցյան այբուբենը համեմատելով հունարեն, ասորերեն, պահլավերեն այբուբենների հետ, Յ. Մարկվարտը գտնում է, որ հայերեն 36 տառից 15-ը ծագել է պահլավերենից, 7-ը՝ հունարենից, 6-ը՝ ասորերենից և այլն⁸²: Արդեն մեր օրերում՝ 1960-ական թվերին, Ա. Փերիխանյանն առաջ քաշեց մի նոր վարկած, ըստ որի V դ. վերջից ավանդված հայերեն երկաթագրերը պետք է ծագած լինեն հյուսիսմիջագետքյան արամեական գրի մի տեսակից, որը դեռևս անհայտ է⁸³: Չարմանալի անորոշություն: Իսկ ուսումնասիրողներից նրանք, ովքեր էլ ընդունում են հայոց հին գրականության գաղափարը, բացառում են հայերեն հին այբուբենի գոյությունը՝ ենթադրելով, որ հայերեն նախաքրիստոնեական գրականություն կարող էր գոյություն ունենալ միայն արամեական գրով:

Չարմանք է հարուցում այն նախանձելի միասնական եռանդը, որով հետազոտողների մեծ մասը մերժում է հին հայերեն գրի և դպրության գաղափարը կարծես միայն նրա համար, որպեսզի հետո ամեն կերպ պնդեն, թե Մաշտոցն իր հայերեն այբուբենը ստեղծել է հունական, ասորական, արամեական, պահլավիկ և իրեն ժամանակակից էլի ինչ-որ հայտնի ու անհայտ այբուբենների ձևափոխած տառերից: Մի թե Մաշտոցը կարող էր իր իսկ ձեռքով արած այդ ձևափոխումները ներկայացնել իբրև Աստծո թաթի գծագրություն և իբրև աստվածային տեսիլքով շնորհված հայերեն տառեր: Եվ, վերջապես, հասկանալի չէ, թե ինչու՞ Մեսրոպ Մաշտոցը պետք է դեն նետեր Դանիել Ասորու գտած հին հայերեն 24 նշանագրերը և դրանք պարզապես լրացնելու փոխարեն զբաղվեր հարևան օտար ազգերի այբուբեններից նույնքան տառեր ձևափոխելով: Եթե այդպես լիներ, ապա Խորենացին այս դեպքում ևս կարող էր ասել, թե Մեսրոպը «մուրացված գծագրությամբ» է ստեղծել հայոց այբուբենը:

Մեր համոզմամբ, և դա բխում է սույն ուսումնասիրության ամբողջ նախընթաց շարադրանքից, Մեսրոպ Մաշտոցը, հայոց նոր այբուբենը ստեղծելիս, օգտվել է հայոց հին այբուբենից մնացած այն 24 նշանագրերից, որ գտել էր Դանիել Ասորին և այնուհետև Եդեսիայում լրացրեց դրանք իր նորաստեղծ

⁸¹ Նույն տեղում, էջ 176-177:

⁸² Նույն տեղում, էջ 166-176:

⁸³ А. Г. П е р и х а н я н. К вопросу о происхождении армянской письменности. – “Переднеазиатский сборник”, № 2, М., 1966, с. 103–133.

բաղաձայն ու ձայնավոր նշանագրերով: Այդ հին հայերեն այբուբենով էր գրված հեթանոսական շրջանի հայալեզու գրականությունը:

Մինչև այժմ մաշտոցյան այբուբենը հարաբերության մեջ է դրվել ամենատարբեր այլալեզու գրային համակարգերի հետ: Այս առումով ամենից համապարփակ ուսումնասիրությունը պատկանում է մեծանուն Հ. Աճառյանին, որը մեսրոպյան այբուբենը համեմատել է 17 օտար այբուբենների հետ և կազմել համեմատական տախտակ⁸⁴, ապա 4 տասնյակ էջերում հայոց այբուբենի տառերը մի առ մի քննելիս, նա ի մի է բերում նախկինում այլ ուսումնասիրողների արած համեմատությունները՝ յուրաքանչյուր տառի ձևի և ծագման մասին տալով իր սպառնիչ եզրակացությունը⁸⁵:

Այսուհանդերձ, մինչ այժմ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել խարոշթի գիրը, որը Ք. ա. I հազարամյակի կեսերին ի հայտ եկավ Հնդկաստանում և պաշտամունքային բրահմի հնդկա-արիական գրին զուգահեռ (Բրահմա աստծո անունից)՝ գործածության մեջ էր դեռևս Մագաթիսա պետության գոյության շրջանում: Խարոշթի գրի նախահայրենիքի մասին այսօր էլ աղոտ պատկերացումներ կան ճանաչված հնագրագետների շրջանում: Խարոշթի բառի ստուգաբանումներից մեկը և ամենից հավանականը կապվում է հնդկա-իրանական Kharoṣṭa – «խարափոշտա» բառի հետ, որի առաջին արմատը՝ «խար» (էշ) ծանոթ է հայերիս պահլավերենից փոխառյալ «խարազան» բառից (էշի մտրակ), իսկ երկրորդ արմատը՝ «փոշտ», հայերեն «փոստ, կաշի» բառն է, ուրեմն ամբողջ բառը նշանակում է «իշակաշի»՝ մագաղաթ, որի վրա գրվում էր այդ գիրը⁸⁶: Շատ գայթակղիչ է մագաղաթ բառը կապել վերոհիշյալ Մագաթիսա երկրի անվան հետ, որտեղից բերվում էր մագաղաթը, թեև լեզվաբանները նրա արմատը որոնում են սեմական լեզուներում:

Ք. ա. IV դարում Հնդկաստանում Մաուրյա հարստության արքաները, խարոշթի գիրն իրենց մեծ տերության վարչական և տնտեսական պահանջներին ծառայեցնելու հետ միաժամանակ, ինչպես ենթադրվում է, հնդկական լեզուներին առավել հարմարեցնելու նպատակով, ընդունեցին բրահմի գրի հիմնական սկզբունքները, այդ թվում և գրության աջընթաց ուղղությունը⁸⁷, որի շնորհիվ խարոշթին լայն տարածում գտավ հյուսիսարևմտյան Հնդկաստանում և նրան Արևմուտքից սահմանակցող Բակտրիայում, Արիանայում, ինչպես և հնդկա-սկյութական, հնդկա-հունական երկրներում⁸⁸, որոնք Ք. ա. III դ. կեսերից մտան Հունա-Բակտրիական թագավորության, և ապա Պարթևական տերության մեջ, իսկ Ք. ա. I դարից՝ անցան քուշանների տիրապետության տակ⁸⁹:

⁸⁴ Հ. ր. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 514:

⁸⁵ Նույն տեղում, էջ 517-555:

⁸⁶ Д. Д и р и н г е р. Նշվ. աշխ., էջ 356:

⁸⁷ Նույն տեղում, էջ 358:

⁸⁸ Ըստ ոմանց, խարոշթի գիրը Ք. ա. III դ. կեսերին գերակշռում էր Հնդկաստանի հյուսիսարևմուտքում, որը համապատասխանում էր ներկայիս Պակիստանին և Արևելյան Աֆղանստանին (տե՛ս D. D a n i e l s and W. B r i g h t. The World's Writing Systems. New York, Oxford, 1996, p. 373):

⁸⁹ Տե՛ս Der Alte Orient in Stichworten. Leipzig, 1978, S. 237.

Այս պատճառով էլ խարոշթին ստացել է նաև հնդկա-բակտրիական կամ հնդկա-արիական գիր անունը⁹⁰:

Խարոշթի գրի մինչև այժմ պահպանված հնագույն արձանագրությունները պատկանում են Մաուրյա հարստության շրջանին՝ Ք. ա. 317–185 թթ.: Թեև բրահմին և խարոշթին վանկային այբուբեններ էին, բայց հասցվել էին ձևի և հնչյունային այնպիսի ինքնատիպության, որ լիարժեք արտահայտում էին միջին հնդկական լեզուների բաղաձայն ու ձայնավոր հնչյունների ամբողջ կազմը⁹¹, ի հակադրություն ենթադրվող փյունիկյան (քամական) և արամեական⁹² (սեմական) գրային նախատիպերի, որոնք գրեթե ամբողջապես զուրկ էին ձայնավոր նշաններից:

Ղ. Դիրինգերը բերում է խարոշթի գրի մի հավաքական աղյուսակ և մի անթվակիր եռատող արձանագրություն, բայց դրանք, մաշտոցյան այբուբենի հետ զգալի նմանությամբ հանդերձ, որոշակի ժամանակաշրջան ենթադրելու միջոց չեն տալիս⁹³:

𐭀	𐭁	𐭂	𐭃	𐭄	𐭅	𐭆	𐭇	𐭈	𐭉	𐭊	𐭋	𐭌	𐭍	𐭎	𐭏	𐭐	𐭑
ka	ku	ke	kha	khi	khu	ga	gi	gam	ga	gu	gū	gha	ghu	gha	ghu	gha	ghu
ca	cā	caṅ	ci	ce	ca	cha	chi	cham	cha	cha	cham	cha	cha	cham	cha	cha	cham
ja	ja	jam	ja	ji	ja	ji	ja	ji	jha	jhe	jhu	na	ni	ni	ni	ni	ni
ta	tam	tam	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā
dha	dha	dhi	na	ta	tam	ti	te	taṅ	tā	tah	tā	tā	tā	tā	tā	tā	tā
da	dā	dū	de	dā	dā	dham	dhi	dhi	na	ni	ni	ni	ni	ni	ni	ni	ni
pa	pa	pam	pa	pi	pa	pi	pa	pi	pha	phe	phu	na	ni	ni	ni	ni	ni
ma	mā	maṅ	mi	me	mā	mi	mā	mi	ma	ma	ma	ma	ma	ma	ma	ma	ma
ra	ram	ra	raṅ	ri	ra	ri	ra	ri	ra	ra	ra	ra	ra	ra	ra	ra	ra
va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va	va
sa	sam	sam	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā
ka	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā
ca	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā
ja	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā
ta	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā
va	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā
sa	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā
ka	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā
ca	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā
ja	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā
ta	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā
va	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā
sa	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā
ka	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā	kā
ca	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā	cā
ja	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā	jā
ta	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā	tā
va	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā	vā
sa	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā	sā

⁹⁰ Д. Д и р и н г е р. Նշվ. աշխ., էջ 356:




















































⁹¹ В. А. И с т р и н. Նշվ. աշխ., էջ 235:

⁹² Ղ. Դիրինգերը, նրան հետևելով նաև Վ. Բատրինը կոպիտ սխալ են թույլ տալիս՝ այբուբենի ծագումը վերագրելով միայն սեմական ճյուղին, քանի որ փյունիկերենը պատկանում է քամական (ոչ թե սեմական) լեզվախմբին:

















⁹³ D. D i r i n g e r. The Alphabet, London, 1949, pict. 167; Д. Д и р и н г е р. Նշվ. աշխ., էջ 357:

Ղ. Դանիելսը և Վ. Բրայթը, Աշխարհի գրային համակարգերը գրքում համեմատաբար ավելի քիչ տվյալներ են հաղորդում խարոշթի գրի վերաբերյալ, քան նախորդ հեղինակները (սեմ U. D. Daniels and W. B r i g h t, p. 373–383):

Ինչպես երևում է բերված աղյուսակից, խարոշթի վանկային համակարգում յուրաքանչյուր տառ մեկ լիարժեք վանկ է նշանակում՝ բաղաձայն ու ձայնավոր հնչյուններով: Շատ հնարավոր է, որ խարոշթի վանկային այբուբենը գործածվել է նաև հեթանոս հայերի մեջ, և հին հայոց գիրը ևս ի սկզբանե եղել է վանկային՝ բաղաձայն ու ձայնավոր լրիվ համակարգով, ինչպես ուրարտական սեպագիրը: Վանկային էր նաև հին հունական գիրը, որը Ք. ա. VI դարից հետո աստիճանաբար փոխարինվեց հնչյունային այբուբենով⁹⁴: Ուշադրություն են գրավում բերված աղյուսակում այն նշանագրերը, որոնք նույնական կամ նման են հին մերոպյան տառերին.

- Դ-   (տող 16)
- Ե-   (տող 12)
- Զ-   (տող 4)  (տող 5)  (տող 13)
- Է-  (տող 12)  (տող 13)
- Ը-   (տող 15)
- Ի-     (տող 1)
- Լ-  (տող 7)   (տող 2)
- Ծ-   (տող 2)     (տող 12)
- Ճ-  (տող 6)
- Չ-    (տող 12)
- Ղ-   (տող 12)   (տող 16)
- Յ-     (տող 1)   (տող 14)
- Ն-   (տող 13)  (տող 14)
- Շ-   (տող 17)
- Չ-    (տող 5)  (տող 13)  (տող 14)
- Պ-  (տող 11)
- Ռ-  (տող 6)

⁹⁴ В. А. Истрин. *Նշվ. աշխ.*, էջ 336–337:

- Տ-  (տող 18)
- Բ-      (տող 9)  (տող 12) հմմտ.  (տող 17)
- Յ-     (տող 4,5)
- Ք-   (տող 2) հմմտ.   (տող 13)


Բերենք մի քանի հայերեն տառերի վերաբերյալ Հր. Աճառյանի քննությունը: Ըստ նրա հայերեն «Ծ» տառն առաջ է եկել ասորերեն կամ էստրանգելո տառաձևերից, որոնք իրար նման են: Այս կարծիքին են նաև Լագարդը և Մարկվարտը: «Այս գրերը հայերենին անցնելու ժամանակ՝ տակի կիսատ կլորակը ամբողջացած և աջակողմյան շրջագծից դուրս է երկարած, այնպես որ ձևացրել է մի երկրորդ թև, գրեթե բոլորագիծ «Ծ»-ի նման: Հետո այդ ձևը երկարագրի գեղագրության օրենքով ձևավորվել և առաջ է բերել «Ծ»⁹⁵: Ընթերցողը հեշտությամբ կարող է համոզվել, որ Հր. Աճառյանի նշած բոլոր փոփոխություններով հանդերձ, հայերեն «ծ» տառը առկա է արդեն խարոշթի գրի վերը բերված այբբենական շարքում (տող 7)՝ «Ծ» տառաձևերի մեջ:

Հայերեն «Յ» տառի ստեղծման մասին Հր. Աճառյանը, մերժելով այլոց տեսակետները, նշում է. «Ըստ իս Մեսրոպը այս գիրը կազմել է այլանմանության օրենքով՝ մեր Ծ գրից: Այս գրի հիմնական մասն էր տակի կլորակը, որ երկու անգամ իրար վրա է դրել, ինչպես արել է Յ գրի համար»⁹⁶: Դարձյալ դժվար չէ համոզվել, որ նշված բոլոր ձևափոխումներով հանդերձ, մեսրոպյան «Յ» տառը առկա է վերը բերված խարոշթի այբբենական շարքում (տող 17):

Հր. Աճառյանը համաձայն է այն քննիչների կարծիքին, որոնք հայերեն Ք - տառը դուրս են բերում հունարեն X ձևից. «Այս գիրը մի քիչ ուղիղ կանգնեցնելով՝ ունենում ենք հայ ձևը»⁹⁷: Մինչդեռ հայերեն «Ք» տառը հենց ուղիղ դիրքով հանդիպում ենք խարոշթի գրում, ինչպես երևում է այբբենական շարքից (տող 21): Այս օրինակները կարելի է շարունակել:

Ուշադրության են արժանի աղյուսակում հատկապես այն նշանագրերը, որոնք արտահայտում են dra, gra, kra՝, sra, tra վանկերը, որոնք բնորոշ են նաև հայերենին:

Ստորև հայ և օտար հնագրագետների ուշադրությանն են ներկայացնում 38 թվի քուշանական մի վիմագիր արձանագրություն⁹⁸, որը տեղ չի գտել համաշխարհային այբուբեններին նվիրված համընդհանուր տեղեկագրերում. տող 1՝ Կ, ծ (՞), Հ, u, Բ, դ, Ռ, տող 2՝ Տ, Ն, դ, Պ, g, q, Կ, Ը, Ի, Հ, տող 3՝ Պ, Տ, Ի, u, Բ, Հ, Ց:



⁹⁵ Հր. Աճառյանի նշվ. աշխ., էջ 534:
⁹⁶ Նույն տեղում, էջ 552:
⁹⁷ Նույն տեղում, էջ 554:
⁹⁸ Ské u Der Alte Orient..., S. 237.

1 Տող			2 Տող			3 Տող		
Կ	-		S	-		Պ	-	
ծ	-		չ	-		S	-	
Հ	-		ղ	-		Ի	-	
u	-		ղ	-		Ս	-	
Բ	-		g	-		Բ	-	
դ	-		q	-		Ը	-	
Ռ	-		Կ	-		Ը	-	
Յ	-		Ը	-		Հ	-	
			Ի	-		Ց	-	
			Հ	-				

Արձանագրությունը երեք գծատողում պարունակում է խարոշթի գրի ավելի քան 80 տառանիշ, այդ թվում՝ շուրջ 40 տառաձև, որոնց մեջ առկա են մոտ 30 հայկական տառանիշեր և տառաձևեր՝ նույնական կամ նման մաշտոցյան այբուբենի տառերին. տող 1՝ Կ, ծ, Հ, u, Յ, Բ, դ, Ռ, տող 2՝ S, չ, ղ, Պ, g, q, Կ, Ը, Ի, Հ, տող 3՝ Պ, S, Ի, Ը, Հ:

Ինչ է ստացվում. բազմաթիվ բանասերներ և հնագրագետներ համատորեն ապացուցում են, ինչպես տեսանք, որ Մաշտոցը V դ. սկզբին հայերեն տառերը ձևափոխել է իրեն ժամանակակից հունարեն և այլ այբուբեններից, մինչդեռ իրականում այդ «ձևափոխված» տառերն արդեն իսկ առկա են դրանից մոտ չորս դար առաջ՝ մեր թվականության սկզբին գրված արձանագրության մեջ: Անտարակույս, դրանք հենց Դանիել եպիսկոպոսի գտած հին հայերեն նշանագրերն են, որ Մաշտոցը ներառել է իր ստեղծած նոր հայոց այբուբենի մեջ, և իրենց գծագրությամբ ու ոճավորմամբ դրանք ի հայտ են բերում հեթանոս հայերի օգտագործած այբուբենի սերտ աղերսն ու ազգակցությունը հնդկաբալթիական վանկային խարոշթի գրի հետ: Շուրջ 40 տառապատկերի առկայությունը վերոհիշյալ արձանագրության մեջ, որը դեռևս ամբողջական այբուբեն չի ներկայացնում, թույլ է տալիս եզրակացնել, որ խարոշթի կոչված հնդկաբալթիական գրին ազգակից հին հայերեն հնչյունական այբուբենն անհրաժեշտ թվով նշանագրեր է ունեցել հայոց լեզվի բաղաձայն և ձայնավոր հարուստ հնչյունային համակարգն արտահայտելու համար:

Քուշանների թագավորության անկումից հետո (Ք. հ. III դ.) խարոշթի գիրը դուրս եկավ գործածությունից, և տեղը գրավեց բրահմին, որից էլ առաջ են եկել հնդկական հետագա այբուբենները: Դա հենց վկայում է, որ խարոշթիին ազգակից հայոց հին գիրը գործածության մեջ է եղել Հայաստանում Ք. հ. III դարից շատ ավելի առաջ: Ըստ երևույթին, դրանց աղերսակցությունը վերաբերում է մեր թվականությանը նախորդած դարերին: Մաշտոցի ընտրած աջընթաց գրությունը և ձայնավոր տառերի առկայությունը նրա ստեղծած այբուբենում, պետք է վերագրել ոչ թե հունարենի ազդեցությանը, ինչպես ենթադրում են մինչև այժմ, այլ հատուկ էին արդեն իսկ հին հայոց գրին՝ հատկանիշներ, որոնք ավելի շուտ վկայում և հաստատում են մաշտոցյան այբուբենի ուղիղ կապը հեթանոսական հայերեն գրի հետ:

Հնդկա-բակտրիական և հայոց հին գրերի շփման երկու հիմնական եզրերից մեկը հեթանոս հայերի ունեցած սերտ հարաբերություններն էին Հնդկաստանի և Բակտրիայի հետ: Վերջինիս մայրաքաղաքն էր հայ հին պատմիչների մոտ հաճախ հիշատակվող Բահլը կամ բուն Պահլավը⁹⁹՝ հին պարթևների կամ, այսպես կոչված, հնդիկ-արշակունիների բնիկ հայրենիքը, որ Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին անվանում են կողմանք Քուշանաց, ինչպես նաև երկիր կամ աշխարհ Քուշանաց¹⁰⁰: Նրանց հետ հայ թագավորները հեթանոս ժամանակներից դինաստիական կապեր ունեին: Ըստ ավանդության, բուն Պահլավից էր ծագում նաև Գրիգոր Լուսավորչի տոհմը: Իսկ երկրորդ շփման եզրը՝ դեռ քրիստոնեությունից առաջ Հայաստանում՝ Տարոն գավառում հնդիկ քուրմերի հիմնած Դեմետր և Գիսանե կուռքերի պաշտամունքն էր, որոնց, ըստ Ջենոբ Գլակ պատմիչի, պաշտում էին նաև Հնդկաստանում¹⁰¹:

Մերոպ Մաշտոցը եղել և մնում է քրիստոնեական դարաշրջանի հայ նոր գրի ու դպրության ստեղծողը և արժանապես սրբացվել է իբրև լուսավորության հանճար: Նրա ստեղծած հայոց նոր այբուբենը հավիտենական պատգամ է՝ ուղղված հայ ժողովրդի բոլոր սերունդներին՝ այլևս ոչ մի պայմանով մոռացության չտալ հինավուրց հայոց գիրը, որպեսզի էլ երբեք հարկ չլինի այն հայտնաբերել:

⁹⁹ Ագաթ., §26, 32: Պահլավ կամ Պարթավա. կոչվել է նաև Բակտրա՝ Օքսուս (Ամու-Դարյա) գետի հովտում:

¹⁰⁰ Ագաթ., §20, Խոր., Բ. Բ, էջ 103, ԿԷ, էջ 202, ԿԸ, էջ 203, ՀԲ, էջ 208, 210, ՀԴ, էջ 211:

¹⁰¹ Ջ է ն ո բ Գ լ ա կ Ա ս ո բ ի. Պատմություն Տարոնյ, Վենետիկ, 1832, էջ 35-36:

МЕСРОП МАШТОЦ
И ДОМАШТОЦЕВСКОЕ АРМЯНСКОЕ ПИСЬМО

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Р е з ю м е

Впервые выдвигается точка зрения о том, что Месроп Маштоц изначально целеустремленно искал древнеармянское письмо: сперва у гохтанских язычников-жрецов, позже в Месопотамии: у язычников, знатоков древних письменностей, а также в языческих книгах, хранящихся в знаменитой Эдесской библиотеке. Обнаруженная кушанско-бактрийская надпись 38 г., написанная древним индо-бактрийским письмом *кхарошти*, а также публикуемая таблица письмен кхарошти вместе содержат более 280 слоговых букв, из коих не менее 25 знаков тождественны или схожи с буквами маштоцевского алфавита. Можно заключить, таким образом, что Маштоц своим алфавитом возродил дохристианскую армянскую письменность.

MESROP MASHTOTS AND PRE-MASHTOTSIAN ARMENIAN SCRIPT

ALBERT MUSHEGHYAN

S u m m a r y

The author brings a new point of view that from the very beginning Mashtots was purposefully in search of the ancient Armenian letters: first at Gokhtan pagan priests and later in Mesopotamia: at pagan experts of ancient scripts and also in books kept in famous Edessian library. Author's revealed Kushan-Bactrian inscription of 38 A.C., written in ancient Indo-Bactrian script *Kharoshti* and also the published letter table of Kharoshti include more than 280 syllabic letters over 25 of which are related or are similar to Mashtotsian alphabet. On that basis the author comes to the conclusion that Mashtots restored Armenian letters that had existed before Christ.